ԱԼԻՔ

ԲԱԺԱՆԱՐԴԱԳԻՆՆԵՐ

Քաղաք	Գեղատեսիկ	Աշխարհամաս
Տարեկան 6 ր.	Տարեկան 7 ր.	Տարեկան 32 ֆր.
1/2 տարեկան 3 ր. 50 կ.	1/2 տարեկան 3 ր. 50 կ.	1/2 տարեկան 16 ֆր.
Ամսական 60 կ.	Ամսական 70 կ.	Ամսական 3 ֆր.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ.

Վճարն է առաջին երեսում իւրաքանչիւր տողին 6 կոպեկ, իսկ վերջին երեսում 3 կոպեկ։ Մեծ և տեղական յայտարարութիւնները առանձին պայմանով։

Կողմակից դէպս յայտարարութիւնները ընդունւում են 1 երեսում—20 կոպ. իսկ վերջին 10 կոպ։

Ամբագրութիւնը բաց է 10—3 ժ. և երեկոյեան 6—8 ժ., իսկ կիրակի և տօն օրերին միայն 12—2 ժ.

Խմբագրութեան հասցէն. Թիֆլիս, Ծրէշլինսկայա փող. № 6. Тифлисъ. Редакція „Аликъ", Фрейлинская, № 6. Կամ Rédaction „Alik" Tiflis (Russie).

Հեռախօս № 90

№ 83 ԵՐԵՔՇԱԲԹԻ 8 ՕԳՈՍՏՈՍ 1906 Թ. ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ 1906 Թ. ԵՐԵՔՇԱԲԹԻ 8 ՕԳՈՍՏՈՍ № 83

„Ալիք"-ի առանձին համարն արժէ 3 կոպէկ.

ՇԱԲԱԹԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱԺԱՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱԼԻՔ"

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

Օգոստոսի 1-ից մինչև տարւայ վերջը Թիֆլիսում և Թիֆլիսից դուրս—3 ր. Արտասահման—14 ֆրանկ։

ԲԱԺԱՆԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆԱՒՈՒՄ Է ԱՄԵՆ ԱՄՍՒ 1-ԻՑ

Դիմել՝ Тифлисъ, редакція «Аликъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Alik».

Եմբագրատունը գտնւում է Թիֆլիսում, Ծրէշլինսկայա փողոց № 6.

ՀԱՄՈՑԻՆ ՓՈԽԵԼՈՒ համար պիտի վճարեն Թիֆլիսի բաժանորդները (Թիֆլիսից հեռանալու դէպքում)—1 ր.—այլ տեղերի բաժանորդները (բացի Թիֆլիս գալու դէպքից)—40 կ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул., № 15)

Առևտրական հմուտների նպատակն է՝ մանկագիտական առևտրական կրթութիւնս տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ։ Ասպարէզներն ստանում են ա ա ե ե ս ա ա ե ե ր։

Առևտրի առարկաները արանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն. 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրայ. 5) Առևտրական քերականութիւն. 6) Առևտրա կան և տուրկակ կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Երի ուսուցումն ցանկացողներին դրով մեքենայի վրայ։ Գարագմունքները կուսբերւում են ամեն օր։

Ուսումն սկսւում է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, առ ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12 ր, և երեկոյեան 4-ից մինչև 9 ժամը, կուսբեր հինգերի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիշօնսկի տանը, № 9, Սերգիևսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապես կուսբեր հինգերի բնակարանում։ Օտարազգացիք դիմում են։

Թիֆլիս, С. П. Манукьянцу. 301. 30—14

Ֆիլանևների միհիտարեւիից հաստատած

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Баку, уголъ Красновод. и Меркуровск. д. Набатовыхъ)

Կուրսերի նպատակն է տալ ռուսկերէն հիմունքներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշւապ աիներ։ Ասարտողներն ստանում են ատտեստատներ։ Կուրսերում ասւնդում են՝ 1) Առևտր. Քերականութիւն և Թուաբանութիւն համրիչի վրայ. 2) Հաշ-ւապահութիւն՝ առևտրական, արդիւնաբերական-գործարանական և բանկային. 3) Առևտրա Իրաւագրութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և տուրկական օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագրագրութիւն (ստենոգրաֆիա). 7) Ուսուցչի դրով մեքենայի վրայ։

Ուսումն սկսւելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից առ ամենայն օր, կուսբերում առաւօտեան ժ-ից մինչև 12-ը, երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։ Կուսբերի կանոնագրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիր (программа)—որտեղ և ուղարկւում են նրիաբար Օտարազգացիները դիմում են՝ Баку, Учредителю Коммерческихъ Курсовъ А. И. Теръ-Каспарову. 51. 10—25

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. Գ. ՂՈՐԳ-ԲԼԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը առ ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վիլհաելմօվսկայա փողոց № 8։ 137 25—100

ԲԺԻՇԿ

Գ. Ն. Մադաքեանի

Նեղքին և երեսայոց հիւանդութիւններու։ Առանձնասենեակ ստացողի և աղքեների հիւանդութիւնների։ Ընդունելութիւն 12—1 ժ. առ. և 5—6 ժ. երեկ.

Մխայլօվսկի պր. տ. Ճաւճաւնձէի, 36. 122 50—34

ՇՈՒԼԱԽԻՐԻ ԵՐԿՍԵՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ

համար հարկաւոր է ԱԻԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթական 12—18 ուսւոց լիզու և այլ հարիւր բուլի ռոճիկով, շորս վարժուհի ու երեք ուսուցիչ 18—24 գաս, նոյն հարիւր բուլի ռոճիկով, Բաթումի նահանգ, ուսւոց—հայոց լիզուներից, երգեցողութեան, ձեռագործ կար ու ձևիս ճանկացողները պիտի դիմեն Шулаверъ, попечительству Армянскихъ школъ.

454 4—5

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

ԵՐԵՒԱՆԻ ք. ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

Քարտմանած

1. «Մերոյ հեղերը» և նոցա ծագումը 10 կ.
2. «Հէնանդ սէր», առաջաբան. վէպ . 40 »
3. Թափառ Բուլղար», Բակի ապտամբ. 30 »
4. «Մի ամիս Կ.-Պօլսում», 1896 Թ. հայկ. սարսափներից, Մատթ. ա.-հայ. Իզմիրլեանի պատկերով . . 20 կ.

Գումարով գնողներին 20% զեղչ։

Դիմել բոլոր հայ գրավաճառներին կամ Թղթակցել՝ Ալէքսանդրապոլ. 456 4—3

„Արեւու Զաւակներ"

հրատարակիչ Սս. Մելիք-Մոդոմեանցը յայտնում է իր գիտակից հասարակութեան, որ «Արեւու Զաւակներ» 101-րդ երեսի վերջին տողում սպրեղ է մի խոշոր տպագրական սխալ։

Քոհանայ «Քարքաւոր բուլանոցիքը»-ի, պէտք է լինի «հայրենասէր բուլանոցիքը»։

Միևնոյն ժամանակ խնդրում է գրավաճառներին և գեղ. անհատներին յիշեալ սխալն ուղղելու համար ամբիծապես կարել 101-րդ Քերթը։

451 4—4

ԿԱՐՍԻ

ՀԱՅՈՑ ԵԿ.-ՆԱՀԱՊԱՏ ԵՐԿՏԵՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է համալսարանական փորձած

ՍԻԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ

Ծանկացողները կարող են յայտնել իրենց պայմանները

473 Հոգաբարձութեան 3—1

Թիֆլիս, 7 օգոստոսի

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՇԻՓԸ

Ոլքան աւելի է շահագրգռւում քաղաքական ասպարէզ, այնքան աւելի ակնյայտ է դառնում, որ մանակի ցնցումների, սահմանափակ ու սպօրատիկ շարժումների անհնարին է փլել նորագոյն բռնապետութեան վիճակի մեխանիզմը, չնայած մշլլիօնաւոր ահիճների վրայ, և որ անհրաժեշտ է մի բուռն ու համաստած գրոհ, աւելի ուժգին, քան բոլոր նախորդները միասին առած, աւելի ցնցող, քան համաշխարհային պատերազմի սարսռազդու դրուագները։

Բէակցիան, այդ հազարգլխեան հիդրան, տակից ագում տուպալած ու միասած է հաչակում, բայց և այնպես անդամ յաղթանակով է գալիս գալիս ամենածանր փորձութիւններից և այսօր տակաւին ապրում է չնչում առողջ թոքերով և աւելի անեղծ, աւելի ամբարտաւան, քան երբեք...

Ոչ, անշուշտ, անձնագոհութեան ու հերոսութեան փաստերը չեն, որ պակասում են արդի Ռուսաստանին. այդ անվեհեր ըմբոստացութիւնը դիմադրական շարքերում, որոնք գոյւում են ամբողջ ադեսաւի նախձերներով, կախաղաններով ու մասսային գնդակահարութիւններով. այդ անհամար սեբբրօական գործադրութիւնները երկրի բոլոր ծայրերում, հրդեհները գիւղական-կալւածատիրական աշխարհում, այդ սխսէմատիկ ցոյցերն ու արշաւանքները բնբոքութեան ճիւղաւոր դէմ, որին մի վայրկեան չեն թողնում հանդիստ, այլ պահում են մշտնջենական պանդխտի տակ, լարած, նեաբգային վիճակում,—դա մի հոյակապ ըմբռնար է, որպիսին գուցէ երբէք չի տեսել պատմութիւնը և որը մեծ է հէնց իր անօրինակ արհաւիրքներով և իր յամառ ու ոդբերգական յարատևութեամբ...

Աշխարհը պատկառանքով խոնարհւում է այդ յուզիչ էպոպէի առջև, տիեզերական գալբէ այդ լսւում են ամեն օր ցնծութեան կոչեր ու որոշ դէպում ծախսարութիւններ՝ նրա անմահ հերոսներին, Յեղափոխութիւնը շարունակ օրհնւում է, խնկարկւում, բայց ինչ...

Մի ծանր զգացում խեղդող կծւածքի պէս միաժամանակ պաշարում է յեղափոխական, դեռևէլսւս մարդկութիւնը և յոռետես մտքեր ցանում. դա պաշարի անհագամնելի գոհութեան զգացումն է, դա ցնդ-ցան ճիգերի, կրկնացած, յամառ հակահարած ձեռնարկների ատամ-ջրտնեան դիտակցութիւնն է։

Ընդհանուր գործադուլը մի տարուց է վեր տեղ լզզուն է և միակը, դրժքաքսարար, որ ռազմական ուժերի պարզ վիճակում ունի որոշ համեմատութեան հետ և իրագործելու որոշ շանսեր։

Ընդհանուր գործադուլ. դեռ թարմ են յիշողութիւնները հոկտեմբերեան օրերի մասին, երբ մի հարւածով աշխատանքների մի բուռն, ներդաշնակ, հաւաքական ճիգով այդ կեանքը կանգ առաւ. բոլոր ճիւղերի մէջ, վայրկեաբար անդամալուծեց պետական ամբողջ մեքենիզմը և անընդհատութեան, ծաւալուսւ սովի, անօրինակ քաօսի իշխանութեան առկ ընդապատութիւնը յետ նահանջեց արձակելով սահմանադրական մանիֆեստը...

Ընդհանուր գործադուլը ինչպէս ասում են, փուբօր հանեց նրա հմայքն աճեց, բարձրացաւ արհմտեան սօցիալիստների աչքում, որտէ ընդհանուր առմամբ մինչ այն փոքր ինչ թերահաւատ էին կուռի այդ ձևի ազդակութեան, նպատակայարմարութեան վերաբերմամբ. ռուսական էքսպերիմենտը համարեա նոր հորիզոններ բաց արաւ բոլոր երկրների սօցիալիստական կուսակցութիւնների համար, միջազգային բէակցիան իր շուրջը նայեց դողդղոնդ անհանգստութեամբ, ընդհանուր գործադուլի ուրւականը շաբեց բոլոր հին ամրակուռ կաբգերի խարխիսները—և ուռս յեղափոխականները հպարտ էին...

Պետդումայի ընտրութիւնները թարմ են, խրախուսիչ. հոկտեմբերեան մեծ գործադուլը խոր է արձանագրւել մեր երկրի սօցիալիստական գիտակցութեան մէջ և ահա շարունակ ծագումները են յղացւում, վարժեր են լինում՝ առաջացնելու գործադուլի նոյն համաստած բռնկումը։

Տարաբնոյնաբար այդ հայթնել յղացումների մէջ զանց են առնում աշխատութեան անդրաժեշտ գրաւականները և ֆինանսական, ադանդական ոգին իր անհատական հեռանկարներով գերակշռում է հաւասարակ, ներդաշնակ ճիգերի դէմ։ Որքան աւելի են խոչընդոտները բարելաւում ադատագրական շարժման հանդէպ այդքան, ըստ երևոյթին, աւելի պիտի ուժգնանար համերաշխութեան ոգին ֆրակցիաների մէջ. բայց մենք տեսնում ենք ընդհակառակը, որ հաներաշխ, միահամուռ գործակցութեան փոխ, որ անհրաժեշտորէն պայմանն է յաղթանակի՝ օր առաջ շարժման ծախորդութիւնների հետ՝ աւելի և աւելի կորցնում է իր հոգը սօցիալիստական հակամարտ շարքերում, որոնցից իւրաքանչիւրը շարժման գալոց յաղթանակի մէջ իր սեփական յաղթանակն է ուզում տեսնել։

Ի՞նչ խօսք, որ ադանդականութեան, ամբարիշտ կուսակցականութեան մէջ՝ անալիտական դաշինն վայելում է օգնալդեմոկրատիան, որը իր հիմնադրութեան օրերից ի վեր ադադակում է աշխարհովը մէկ թէ ինքը միայն պիտի անսէ իր ուսերի վրայ ադատագրական շարժումը և թէ իրենից դուրս՝ չկը փրկութիւն։

Մինչև չը վերանայ այդ ոգեւոյն մտայնկանքը—յեղափոխութիւնը պիտի միշտ կաղել, պիտի միշտ հանդիպել փորձութիւններին վերջին տեսը էքսպերիմենտը—դրան ապացոյց Օտթիլ-ղեմօկրատները, առանց նախնական համաձայնութեան գալու ուրիշ սոբբերի հետ, առանց կշռադատելու կուռի բոլոր ծանրնռները, խեղաթիւրն ընդհանուր գործադուլ յայտարարել, բայց և կրեցին ծանր, ցաւագին փիասկօ։ Գործադուլը վիժեց և վիժման բօթը տեսաբ շառաչուեղով անցաւ ամբողջ կայսրութեան, ամբողջ քաղաքական աշխարհը վայրկ։

Մի ծանր, կսկծալի իրողութիւն է այս, որ ձեռագործութեան բոլոր բաբեկամները արձանագրում են ձնշած սբբտով... Ոչ միայն կիսաբուրժուական, մանր վաճառական շրջանները, որոնց գործօն աջակցութեամբ պայթել էր հոկտեմբերեան ընդհանուր ու աղող գործադուլը—այլ և բուն աշխատաւոր պրոլետարիատը կարող է է վերջով երես դարձնել այնպիսի կարճատես դեկավարներից, որոնք մի գագրելի ադանդամոլութեամբ՝ փրակցիայի շահը միշտ բարձր են դասում կուռ ու տանջւող ժողովրդի շահից, արհամարհում են հաւաքական ճիգերը և իրենց թեթևամիտ շահամոլութիւններով միասդամայն սուր են յայտնում պատրաստի վայրենաի բաթաքրմիչից։

ԱՐԵՒՆ ԸՍՄԱՆՏԻԶՄ

Գլխ.Ղերի կատարածների և վիճակից Ռուսիայի մէջև բոլորած բաղխումների արձագանգ խորապես պատգաբած է մի հերոսատեսիլ Զինովիևիևիևը կամենում է իշխել՝ անապատի թագաստրոմիին տեղծելով Աւետկան Եւրոպայում։ Նրա գծագրի բոլոր աղաքները պարզապես այդ են ապացուցում. Ռուսաստանի հիւանդից մինչև հարաւ, արևմուտքից—արևելք բանել է մի համաշխատագործ, կրթամասքաբար հրգին, որ ապատնում է լսել այն բոլորը ինչ որ կենսունակ է, կաղող և ներքուստ հարուստ։

Անապատի թագաստրութիւն,—այդ է ուզում բնւրակրատական Շարժումների Ռուսիան —ըմբռնատ ու խեղան, պահանջկոտ ու չը հանգստացող—Նրան պէտք չէ՛ս Մեսեանին կատարելութիւնը հաղկացում է հանդիսատեսների Նման թշատ յատկութիւնամբ օժտած մի ժողովուրդ։ Բնական է, շատ հասկանալի նրա այդ բարբարոսական ցանկութիւնը։ Դոյութեան կռիւը սոսկալագար պղպէս է ֆեյերգում՝ այսպէս թէ այնպէս՝ թոկը առաւ, նետեցով նորանոր ասպարէզներ մարդ, գեղաբեսութ, անտեսական աշխարհներ։ Հետդհետէ մի խոր, անանցանելի վիհ էր գոյանում հինավէն յեղաշրջող հասարակական շերտերի և ոչնչացած, ընացած, մի կէտում քարացած բնութեան մէջ։

Հայկական կոնարատ Ի՞նչով կարելի էր լցնել այս—Ոչնչով։ Կարելի էր լցնել ուժերը մէկի կամ մեսի ոչնչացման գնով. կամ չնչնվիկութեան պիտի չքանար՝ տեղի տալով երեսասարդ Ռուսիային, կամ յեղափոխութեան պիտի մնային, մնայուխպի առաջ բաց անելով վայրագութեան լայն դուռը։ Ուրիշ ելք չը կար. երկուս էլ չնչող, բացասող դրերի մէջ դաշնակցութեան, բնութեան հաշտութեան չէ կարող լինել կապակցութ կասկածոտ այս և գնային յարութեան տալու դարեար մեռեանին. բայց նրանց չը յաջողեց. ու այժմ արդարանում են, թէ գծնցել ենք Տաբրիկեան պալատը պրոպագանդայի համար և ոչ թէ օրգանական—օրէնքդրական աշխատանքի։

Երանի չէր, որ այդ գիտակցութեան աւելի շատ գային և ոչ թէ հակակաղը վերադիպ յեռոյ։ Ռուսական Յեղափոխութիւնը լոյսերի ծագով ծածկւում նրա ընթացքը գանգատացրին պատճ վայրկեաններ։

Եւ գեռ այսօր պարծենում են, անգիտանալով որ երկոց 2½ տարեայ սմուլ գործքը կարելի էր գլուխ բերել մէկ օրում, անգամ մի յաջող մասնեակում, եթէ չը լինէր խայտառակ վերնատնական փասը՝ որ յանդգնօրէն անտարբել եղաւ յեղափոխութեան արշաւին և ձգնեց ու արդեք նրան՝ ուրեքնայ կառնականի պերճախօս ատենաբանութիւններին, որոնց հետևանքն էր օշ այլ ինչ, բայց եթէ... վերջ։

Ոչինչ կարելիութիւն գնայել էր ժողովուրդը «յեղափոխականացնելուն»։ Սխալ էր։ Ոչ թէ նա ժողովրդին յեղափոխականացրեց, այլ ընդհակառակը։ Փասը բոլորովին այլի տասչ է։

Վանդումը վերականգնեց իրերի նախկին յարաբերութիւնը.—ոյսերնէ Քշնամութիւն ժողովրդի և բնութեականութեան միջեւ հաշտութեան ֆիկտիւ միջոցներն այլևս սպառած են։ Գնահատ Գեռևս պէտք է հաշտութեան համար ժողովրդ հանդիսանալ։ Բայց նա ճարեաց ու փնեց։

Հրատարակած է բացարձակ մարտ Իւր ոյժերի վրայ չհիասիկութիւնը վատ է, հանկատ գնդում նա փայտասէր է արտաքին միջամտութեան երազը։ Նա ևս ըստէլ յեղափոխական զգացողութիւնի ընձեռած միջոցներով Դա անբրադրծելի է հայմեանց Այնտեղ, որքան էլ վերջնես պատճառական առասպ ցանկանար թե ռազմական ոյժերի առաջ գործելու ասպարէզ բաց անել։ Բայց ևթէ այդ միջամտութեան իրականանար, գա մի զէրամեսութեան կը լինէր երեսասարդ Ռուսիայի համար։ Ոչ այն պատճառով, որ այդ յեղափոխութիւնը կը ճնշէր—այդպիսի բան երբեք չի կարող տեղի ունենալ—այլ այն հանգամանքն է ևնամի անհնարով, որ սոցիալական անհնարների ունեցող շարժումը կը դառնար մի հղձիսի բուրժուական բէիօրմատիզմ. ուրիշ ոչինչ։

Զէյնովեների, Հօսպօմիների ոգորմելի քաղաքականութիւնը վերջապես Ռուսական օրինական պարլամենտարիզմը—իշխանականութեան ստեղծագործող հանճարի արգասիքը—միեսդ եթէ մտածից հարցնեն՝ ինչ պիտի լինի յետոյ, ոմեր կը պատասխանենք.—«Ռուսական յեղափոխութեան ռազմանաը պիտի լռոյս արեան ծովի մէջ՝ վեպի պատասխանների ու փրկութեան նահանգիստը»։

Դա արեան ըսմանիով է—կը բացականչեն մեզ լաւ երկրազած հայասակները։ Դրանց

յետ մենք գործ չունենք։ Ոյժերի փոխադրութեան ու հակադրութեան օրէնքն է այդպէս Թելադրում։ Այլ ելք չը կայ։ Ինքը ռուս բիւրոկրատիան այդպէս է ցանկանում։ Պատմութիւնը կարդարացնի յեղափոխականներին։ Ուրեմն, դէպի գործ։ Ցեղաշրջումը մղած է դէպի Արեան Ուղին։ Երվենտ

ՄԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

(Տեղս ժամանած Խնուսցի Մ-ի հետ)

Սրանից երկու օր առաջ, դէպք ունեցանք տեսնելու Էրզրումի Նահանգի Խնուս գաւառից տեղս եկած Խնուսցի Մ-ի հետ։ Կամենալով ականատեսի բերանից ստանալ տեղեկութիւններ երկրի մասին, մենք դիմեցինք նրան մի մի քանի հարցերով։

—Ե՞րբ էք ճանապարհուել երկրից.

—Այսօր տասնումէկ օր եղաւ ինչ դուրս ենք եկել Մշոյ դաշտից։

—Ի՞նչպէս է ժողովրդի տրամադրութիւնը.

—Ժողովրդի տրամադրութիւնը վատ է, բայց ընկճւած է տուրքերի ծանրութիւնից։

—Կարողանում են տուրքերը վճարել։ Տուրքերը հաւաքելիս, առաջւայ բռնութիւնները կրկին գործ դնում են, թէ ոչ։

—Տուրքերը վճարում են չափազանց դժուարութեամբ. շատերն ունեցած-չունեցածները ծախում են, որպէսզի կարողանան մի կերպ ազատուել տուրքերից։ Բռնութիւններ գործ չեն դնում, նկատելի է որ աշխատում են խուսափել՝ ժողովրդին չը փախցնելու զգուշութեամբ։ Բայց տուրքերը չափազանց ծանրացրել են. մարդագլուխ (նուֆուս) բռնում է 55 ղուրուշ։ Այնուհետև առնում են խամտօ (նուֆուսից դատ) 20 ղուրուշ, իւրաքանչիւր տաւարից 10-10 ղուրուշ, իւրաքանչիւր ոչխարից 5 ղուրուշ, մեղրի փեթակից 5 ղուրուշ, ցորենից հօթից մէկ, խոտից վեցից մէկ և այդպէս ամեն մի բանից։

—Ձեր շրջանի քիւրդերի յարաբերութիւնները ինչպէս են հայերի հետ.

—Քիւրդեր շատ կան։ Մաս մը լաւ են, մաս մը շատ վատ են։ Մաս մը լաւ կապրեն հայերի հետ, ակնածելով որ հայեր յեղափոխականներ են, կազմակերպւած են՝ երբ լինի իրենց բաղձանքին, նպատակին կը՛հասնեն, մա՛մը էլ՝ որ չէյխերուն համոզւած են՝ վատ կը վարւին, կոչխատեն՝ ջնջել «որ հայ միլլաթ չառաջանայ»։

—Շէյխերը ինչպէս են հայերի հետ.

—Շէյխերը լաւ չեն, չեն մօտենայ։

—Քիւրդերն իրենց մէջ կազմակերպութիւն ունի՞ն. Նրա՞նք մեր շարժումին ինչպէս կը նային.

—Քիւրդերը կազմակերպութիւն չունեն։ Նրանք ասում են, թէ հայերն իրենց հին օրէնքն են ուզում, թագաւորութեան են ձգտում։

—Իսկ ձեր կողմերը թիւրքեր կա՞ն. Թուրքերն ինչպէս են նայում.

—Մեր կողմերը՝ գիւղերում թիւրքեր չը կան, քաղաքներում կան՝ մէօն-թիւրքեր լաւ են նայում, Թաղածները լաւ չ՚ն նայում։

—Մէօն-թուրքերի կազմակերպութիւնը թուրքերի մէջ ծաւալւում է, թէ ոչ։ Նրանց վրայ հայերն ինչպէս են նայում.

—Նրանց կազմակերպութիւնը հիմա շատ մեծացել, ծաւալուել է, բայց մեր կողմերը, Աշիրաթի Թարաֆ, չեն եկած։ Նրանց վրայ լաւ են նայում. մենք ուզում ենք որ նրանք աւելի առաջանան։

—Սուլթանի մահափորձը ինչ ազդեցութիւն է ունեցել քիւրդերի վրայ.

—Սպանութեան փորձից առաջ նրանք առանձին նշանակութիւն չէին տալիս հայ յեղափոխականներին, բայց դրանից յետոյ մեր համարումը շատ է բարձրացել նրանց աչքում։

—Ի՞նչ յոյս ունեն ապագայի վերաբերմամբ.

—«Դու՛ք ձեռը կը ստանաք»—ասում են նրանք։ Եւրոպական կառավարութիւնները ձեր կողմն են, իսկ մե՛նք ստով գլխով սուլթանի ձեռքին ենք. եթէ մեզ ամբողջ ցեղերով էլ ոչնչացնի—տէր կանգնող չը կայ։

—Արաբների կռիւների մասին գիտե՞ն քիւրդերը.

—Ինչպէ՞ս չէ. բոլոր մանրամասնութիւնները.

—Նրանց՛վրայ ինչպէս է ազդում այդ բոլորը.

—Սրտատրոփ սպասում են—և յոյսերը չեն կորցնում—որ մի լաւ ջարդ տրւի կառավարութեան։ Նրանք դիտում են կառավարութեան ամբողջ շարժումները և օրէցօր անյաղթելի և զօրեղ կառավարութեան հմայքն ընկնում է նրանց աչքում։

— Քիւրդերը չե՞ն սիրում կառավարութեան.

—Մեզանից աւելի են ատում։

—Ռուսաստանում կատարւող ներկայ յեղափոխութիւնից լուր ունե՞ն նրանք և ինչպէս է ազդում.

—Այս սահմանի բարեկամ քիւրդերը միշտ տեղեկութիւններ են տալիս նրանց. նրանք զարմանում են թէ ինչպէ՞ս անզէն և հպատակ ժողովուրդը կարողացել է այդ զօրեղ Թագաւորից խլել իր իրաւունքները և կռւել նրա դէմ։

—Իսկ հայ-թուրքական կռիւների մասին ինչ են ասում.

—Կովկասի թուրքերին նրանք չեն սիրում և համարում են նամարդ և փոքրոգի. «չէյթանի» մասն են խառը գտնում այդ կռիւների մէջ...» Յ. Ն.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

I

Թիֆլիս, 6 օգոստոսի

Կիրակի օգոստոսի 6-ին տեղիս Թանդոյեան եկեղեցում նշանակւած էր պատւիրակների ընտրութիւն, բեկանւած ընտրութեան փոխարէն։

Ժողովը բանալով, Հ. Ճուղուրեան կարդաց առաջնորդի պաշտօնական գրութիւնը՝ ուղղւած ծխականներին։ Այդ գրութիւնից պարզւում է, որ առաջնորդը իբրև դողիչ պատճառ ժողովի բեկանման համար ունեցել է հետևեալը.—ա). որ ժողովին մասնակցել են ոչ-ծխականներ, բ). ոչ չափահասներ, գ). ժողովի մասին յայտնուած չէ եղել մօտ 200 ծխականի։

Այդ գրութեան ընթերցումից յետոյ, կարդացեց Նախկին ժողովի նախագահ՝ Արշակ Մեհրաբեանի գրաւոր պատճառաբանեալ բողոքագրութիւնը, որից պարզւեց, որ ոչ մի հիմք չէ եղել բեկանման համար։

Այնուհետև առաջարկութիւն եղաւ անցնելու նախագահի ընտրութեան։ Բայց Հ. Ճուղուրեան յայտարարեց ի զարմանս բոլորի, որ այս ժողովը առաջին ժողովն է (sic), և որովհետև ներկայ են միմիայն 24 ծխական՝ ուստի օրինաւոր չի կարելի համարել։ Ի հարկէ, այդ յայտարարութիւնը մի կատարեալ անհեթեթութիւն էր, և ժողովն իր արժանի գնահատութիւնը տւեց՝ առաջարկելով Հ. Ճուղուրեանին թողնել իր համոզմունքի մէջ անխախտ, թողնելով պատասխանատւութիւնը իրենց՝ ծխականներին վրայ։

Ժողովի նախագահ ընտրւեց, գաղտնի քւէարկութեամբ, Յով. Յովսէփեան։

Այնուհետև ժողովն անցաւ դրւած հարցերի քննութեան։ Որոշւեց ձայն տալ ոչ-ծխականներին։ Նախկին ժողովի բեկանումը ճանաչւեց անօրէն, հետևեալ պատճառներով. ա). ոչ ծըխականների մասնակցելը (թւով 6—8 հոգի) չի կարող բաւարար պատճառ համարւել, քանի որ այդ հակառակ չէ կոնդակի ոգուն և հաստատւած է Վեհ. Կաթողիկոսի հեռագրով. բ). ծխականների մի մասի չը մասնակցելը համարւեց քահանաների զանցառութիւն և գ). անչափահասներ չեն մասնակցել։

Հիմնւած վերոյիշեալի վրայ, ծխականները նախկին ժողովը համարեցին օրինաւոր և հաստատեցին նրա որոշումները։

Այնուհետև ընտրեցին 3 հոգի, որոնք պէտք է գնան առաջնորդի մօտ, բողոքեն նրան ժողովը բեկանելու համար և պահանջեն Հ. Ճուղուրեանի տւած զեկուցման պատճէնը։

Ընտրւեցին Քարտաշեան, Մեհրաբեան և Յովսէփեան։

II

Շամախի, 3 օգոստոսի

Յուլիսի 31-ին թեմիս առաջնորդարանում կայացաւ Շամախու և Գեօքչայ գաւառների պատւիրակների ընդհանուր ժողովը, ուր 21 ձայնով, ընդդէմ 3-ի, ընտրւեց կենտրոնական ժողովի պատգամաւոր, Դաշնակցութեան Թեկնածու Ինժեներ Յովհաննէս Քաջազնունին։

Ի դէպս՝ թէ ինչ տարիճանի է հասնում հոգևոր վարչութեան անտարբերութիւնը դէպի կաթողիկոսական կոնդակը, այդ երևաց և մեզնում տեղի ունեցած մի քանի խոշոր պարտազանցութիւններից. նախ՝ որ ոչ մի գիւղական եկեղեցում հոգևոր հայրերը կոնդակը գիւղացուն չեն բացատրել. այդ պարզ երևում էր, բացի գիւղացիների անթիւ հարց ու փորձից, ու պատւիրակների՝ իրենց ինչի՞ս համար ժողովին ներկայ լինելուց, նա և նրանից, որ երկու գաւառների 45 պատւիրակներից ընտրութեան ներկայ էին միայն 24-ը։ Սոյն ժողովում ճնշւած, կեղեքւած, հայ շինականի բերանից լսւում էր նրա զարթնած բողոքող ձայնը, կղերականների հարստահարման դէմ. «Ախպէր, ձեր գնանք՝ աշխիկանդ ուզում ես պսակել—տէրտէրը մերժում է, «չհաս է», ասում է, բայց հէնց որ 25 ր. ափ ես գնում, խեղճն չհասը հասնում է»։ Ուստի նրանք իրենց ընտրած պատգամաւորից պահանջում են, որ նա առաջարկէ կենտրոնական ժողովում և աշխատէ, որ քահանաների «հարցին» մի որոշ ուղղութիւն տան, որով իրենք կազատւեն այդ փարաջաւորների անվերջ հարստահարութիւններից։ Մհէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՒՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ղազախ, 30 յուլիսի

Յուլիս ամսում Ք...ի շրջանում տեղի ունեցած գիւղական ներկայացուցչական ժողովները ապացոյց եղաւ, որ այդտեղ գիւղացիութիւնը որոշ չափով գիտակցութեան է հասել։

Առաջին ժողովը տեղի ունեցաւ յուլիսի կէսին, որ քննելով իրենց շրջանի վերաբերեալ մի շարք հարցեր՝ հողաբաժիններ աւելացում, հողաբաժանում, հարկերի բաժանում, ինքնապաշտպանութիւն և համերաշխութիւն թուրքերի հետ, կարևոր ճանապարհների հարց և այլն և այլն, եկաւ որոշ եզրակացութիւնների, բայց վերջնական չը համարելով այդ եզրակացութիւնը, չուզեցին հէնց այդ ժողովում որոշումներ կայացնել, այլ յարմար դատեցին մի նոր ներկայացուցչական ժողով գումարել, որը պիտի նորից քննէր այդ հարցերը. երբ դրանք դրւած և քննութեան առնւած կը լինէին գիւղերում, գիւղական ժողովներում։ Այդ երկրորդ ժողովը կայացաւ Ս. գիւղում յուլիսի 30-ին։ Պատգամաւորները եկել էին պատրաստւած, բերելով իրենց հետ համագիւղացիների կարծիքը։ Ժողովը կրում էր լուրջ և նշանակալից բնաւորութիւն։ Այս ժողովում պիտի կայանային արդէն որոշումներ, որո՞նք պարտադիր պիտի լինէին շրջանի համար։

Այս երկրորդ ժողովի բնաւորութիւնը շատ էր տարբերւում առաջինից։ Մինչդեռ առաջին ժողովը կարծիք էր յայտնել համախոսականների միջոցով դիմել պետութեան և հող պահանջել, երկրորդ ժողովն ընդունեց, որ ներկայ րէժիմի տիրապետութեան ժամանակ պետութեան դիմելը զուր յոյսեր են, որ գիւղացիութիւնը «հող և ազատութիւն» ձեռք բերելու համար պիտի գնա այն ճանապարհով, ինչ ճանապարհով գնում է ռուս «մուժիկը»...

Այնուհետև քննութեան առնւեց կէտ առ կէտ վերև բերւած հարցերը և բիչ փոփոխութիւններով ու աւելացումներով ընդունեց և համարեց պարտադիր շրջանի համար։ Հարցերը մշակելու ժամանակ կարմիր գծի պէս անցնում էր այն գաղափարը, որ բոլորն էլ հաւասար են, բոլորն էլ միատեսակ իրաւունքներ ունեն աշխատելու աշխարհիս երեսին... Ընդունեց որ հողը պիտի հաւասար բաժանւի, հարկերը պիտի տրւեն ըստ կարողութեան, պիտի հիմնւեն գիւղական շտեմարաններ, որ կալւածատիրական և պետական ազատ հողերը՝ վարելահող, արօտներ, անտառներ պիտի համայնքի տրամադրութեան տակ դրւեն և այլն և այլն։

Պատգամաւորներն զգում էին և գիտակցում, որ շրջանի տէրը և կառավարողը պիտի լինեն շրջանի ներկայացուցիչները։ Ռեզօլիւցիաներ գուրգուրներին զանազան ինքնակոչ մասնաժողովների դէմ, որո՞նք թոյլ էին տւել իրենց գաւառի անունից գործելու... Նրանք աւելի քան երբ և իցէ լաւ հասկացան իրենց ներկայ կեանքի գաղտնի պատճառները և որոշեցին իրենց համար այն ուղին, որով պիտի հասնեն իրենց նպատակին, պիտի ձեռք բերեն «հող և ազատութիւն»։ Ս. Բ.

ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՂԲՈՒՄ

Կողբ, 1 օգոստոսի

Մեր գիւղի տանուտէր Մինասը «յայտնի» դարձաւ սրանից տասն և չորս տարի առաջ Կողբում անկարելնախճառար կատարած հողաբաժանութեամբ, օգտւելով ժողովրդի տգիտութիւնից։ Ժամանակին բողոքել է գաւառապետին և վերջինս իր կողմից կարգադրել է գիւղական վճիռ կազմել նրա տասն տարւայ պակաս վճարած հարկի մասին և պահանջել յօգուտ հասարակութեան. սակայն, հրամանը եղել է բերանացի և մինչև օրս էլ Թառանց իրագործւելու։

Եղել են դէպքեր, որ աղքատ գիւղացին առաջարկել է իր քսան նաֆարի պատկանող հողը փոխելու տանուտէրի 10 նաֆարի հողի հետ և 3—4 հարիւր րուբլի էլ աւելի տալ նրա օգտին, նա մերժելով մերժել է առարկելով, որ ինքը մշակել, լաւացրել է. այն ինչ կան այնպիսիները, որ իրենից լաւ մշակում են և մի քան էլ աւելի հասարակապատկան ծախս, ուլամ—բէգլէր տալիս, այնուամենայնիւ նրա նման լաւ հողեր չեն կարողանում ձեռք բերել։

Հողաբաժանութեան երկրորդ շրջանն անյաջող պէտք է համարել տանուտէր Մինասի համար. հասարակութիւնը, ի նկատի առնելով անցեալում նրա ծայրայեղ անարդար վարմունքն աղքատների հետ, ընտրեց այնպիսի հողաբաժաններ, որոնք տանուտէրի աղքատաքանդ պահանջներին ուշադրութիւն չը դարձնելով կարողացան հաղթ ու մի նկատութիւններով տասը տարի առաջ նրա ձեռքով կատարւած անարդարութիւնները մի փոքր կանոնաւորել. այս տեղ արդէն տանուտէրի շահերը վտանգւեցին, և նա ձեռք առաւ մի այլ միջոց. նա երեք տարի առաջ իրենից կտրած հողերը, որի հարկն էլ գիւղացիներն էին տալիս, չը յանձնեց տէրերին, պատճառ բերելով, որ նորից խնդիր է տւել «գուբերնատորին» հողաբաժանութիւնը քանդելու համար և շուտով կը ստանայ վերջնական կարգադրութիւն. ի հարկէ այդ բոլորն անում էր այն պատճառով, որ կարողանար ակրատած հողերից մի քանի տարի ևս օգտւել։ Հրայր

ԼՐԱՏՈՒ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 6 օգոստոսի, 11 ժ. 11ր.

Մաֆրաւանդցի թուրքերը յարձակւում գործեցին Աղդարա գնացող կօզակների վրայ, սպանելով նրանցից չորսին։ Օգնութեան հասաւ Վելերնը մի հարիւրեակ կօզակներով։ Թուրքերը դիմադրեցին նրան գնդակներով։ Սկսեց կռիւ, թուրքերը պարտութիւն կրեցին։ Մաֆրաւանդ ոչնչացրած է։ Բարսեղ

Շուշի, 7 օգոստոսի

Հայերը բաց արին Ասկերանը։ Թուրքերը չեն երաշխաւորում Եւլախի և Գեօրանի ճանապարհների ապահովութիւնը։ Թուրքեր րժ. Ջաւրեանին խաղաղ աշխատանքի երաշխաւորութիւն չեն տալիս։ Բարսեղ

Թիֆլիս, 7 օգոստոսի

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը Բաքւից պ. Պ. Մելիքեանից հեռագիր է ստացել, թէ «իրենից անկախ պատճառներով հրաժարւում է տեսչական պաշտօնն ընդունելուց»։

Երէկ երեկոյեան հոգաբարձութիւնն արտակարգ նիստ ունէր, որտեղ ի միջի այլոց պէտք է քննւէր նաև տեսչական նոր թեկնածու ընտրելու հարցը։

Թիֆլիս, 7 օգոստոսի

Շուշու վերջին դէպքերի առթիվ Շամախու և Օրդուբաթի թուրքերը հեռագիրներով խնդրել են Փոխարքայից, որ հեռացնէ գեներալ Գոլոշչապովին և նրան դատի ենթարկէ։

Գանձակ, 5 օգոստոսի

Ջիվանշիրի գաւառում փոխ-գնդապետ Վեվերնի պատժողական զօրախմբին օգոստոսի 2-ին և 3-ին նոր ընդդիմադրութիւն ցոյց տւին երեք գիւղերի մահմեդականները։ Գիւղերը պատժւած են, կան սպանւածներ։ (Պ. Հ. Գ.)

Օգոստոսի 5 ին, երբ երկաթուղու Ալաբաշլի կայարանից հեռանում է № 5 մարդատար գնացքը, վագօնից դուրս են գալիս 8 հոգի զինւած թուրքեր, յարձակւում գնացքը ուղեկցող զինւորներից երկուսի վրայ, խլում հրացանները ու ապա անհետանում։ Ալաբաշլի գիւղի թուրքերին առաջարկւած է յետ դարձնել հրացանները։

—

Օգոստոսի 5-ին, երեկոյեան ժամի 7-ին, Բաթումի ալրանքների գնացքների կայարանի մօտ անյայտ մարդիկ սպանեցին Ինժեներ Լև Դալին, որ յայտնի է իր եռանդուն մասնակցութեամբ ազատարար շարժման։

Կրոնշտադտ, 5 օգոստոսի

Զինւորական դատարանը տասն նաւաստիների դատապարտեց գնդակահարութեան, որոնցից երեքը ոչ-զինւորականներ են։ 15 հոգի արդարացւած են, միացածները դատապարտւած են զանազան ժամանակամիջոցներով տաժանակիր աշխատանքների։ Դատավճռի վաւերացումն սպասւում է այս գիշեր։ (Պ. Հ. Գ.)

Վլադիկավկազ, 3 օգոստոսի

Այսօր ճաշից յետոյ մօտ 20 մարդ մտնում են Ս. Ղազարեանի «Казбекъ» ապարանք և 3 ժամ մի ինչ որ բան ապում։ Կառավարութիւնը լսում է այդ մասին և անմիջապէս կօզակներ ուղարկում ձերբակալելու գրաւչարներին. բայց կօզակներին չէ յաջողւում ոչ մէկին բռնել. մինչև սրանց գալը նրանք կարողանում են անհետանալ։ Յ. Եփրեմեան

Ռէվէլ, 5 օգոստոսի

Զինւորական-ծովային պաշտային դատարանի դատավճռով ապստամբ նաւաստիների վերաբերմամբ՝ գործադրւած է. 17 նաւաստի և 1 ափիստոր առաւօտեան գնդակահարւեցին Վիշգորոդի ամրոցում։ (Պ. Հ. Գ.)

Կաղզւան, 7 օգոստոսի

Պատգամաւոր է ընտրւած Յակոբ Բոչարեանը։

Քարվանսարա, 6 օգոստոսի 6 ժ. 41 ր. ց.

«Տեղի ունեցաւ պատւիրակների ժողովը։ 24 պատւիրակներից ներկայ էին 13 հոգի։ 9 ձայնով ընտրւեց Սամսոն Յարութիւնեանցը, որ նախագահում էր ժողովին»։

Ինչպէս յայտնի է լրագրներից, Յարութիւնեանը ընտրւած է Կարսից։ Այդ, անշուշտ, իրեն էլ յայտնի պիտի լինէր։ Ապա ինչու բացատրել այդ կրկնակի ընտրութիւնը։ Ծան. Խմբ.

Գորիս, 7 օգոստոսի, 11 ժ. 39 ր.

Սիսիանում, Զանգեզուրում և Գենուազում առ այժմ խաղաղ է։ Ղափանում խիստ յուզմունք է տիրում։ Հայերը միայն պաշտպանում են։ Ադմինիստրացիան անզօր է։

Թէհրան, 6 օգոստոսի

Թիւրքական զօրքերն առանց կռւի հետզհետէ տիրում են սահմանակից պարսկական հողերը։ Պ. Հ. Գ.

Քարվանսարա, 7 օգոստ. 4 ժ. 5 ր. եր.

Հէնց նոր իմացանք, որ երէկ Քարվանսարայում տեղի է ունեցել պատգամաւորի ընտրութիւն կենտրոնական ժողովի համար։ Ներկայ էին 13 պատւիրակներ, բացակայում էին 11 պատւիրակներ, դրանց թւում և մենք, որովհետև ժամանակին մեզ տեղեկացրած չէին։ Յանուն արդարութեան բողոքում ենք անկանոն ընտրութիւնների դէմ և նախորդ ընտրութիւնների բեկման դէմ։ Եթէ անկանոն էր Քարվանսարայի պատւիրակների ընտրութիւնը, այդ դէպքում անկանոն էր և Դիլիջանի ընտրութիւնը, որը ստորագրւած է զանազան տեղերում։ Մենք պահանջում ենք կարգադրել նոր ընտրութիւններ կատարել, կամ հաստատել Տէր Միքայէլեանցին, որը ընտրւած էր 16 յուլիսի ամենականոնաւոր կերպով և անկանոն կերպով բեկւած էր առաջնորդի կողմից։

Սև-քարի և Կօթի գիւղի պատւիրակների կողմից՝ Սարգիս Ծովեանեանց

Մեղրի, 29 յուլիսի

Յուլիսի 28-ին մի խումբ զինւած թուրքեր՝ զինւած մօսիններով Մեղրիից Օրդուբաթ տանող ճանապարհին Արաքսի պարսկական ափից յարձակւում են երկու ռուս ինժեներների և նրանց երկու հայ ուղեկիցների վրայ, որոնք գնում էին Օրդուբաթ ռուսական ափով։ Աւազակներից մի քանիսն անցնում են ռուսաց սահմանը, կողոպտում են ինժեներին և տանում հայերի 3 ջորին և մի ձին։ Աւազակների հրացանաձգութիւնից վիրաւորւում են ինժեներներից մէկը ծանր կերպով և երկու հայ ուղեկիցները։

Յուլիսի 24-ին նոյն ճանապարհին անյայտ չարագործներից ռուսական սահմաններում վիրաւորւում են երեք նուաղեցի թուրքեր, որոնցից մէկը ծանր կերպով. լուրերին նայելով թուրքերից մէկը հասնելով Նուաղի, մեռնում է նոյն օրը։

Յուլիսի 25 ին Նուաղի շրջակայքում անյայտ մարդիկ վիրաւորում են ռուս սահմանապահ զինւորներից մէկին։ Ասում են, որ փորձը կատարւած է զինւորից հրացան խլելու նպատակով։

Այդ բոլոր միմեանց յաջորդող դէպքերի պատճառով հաղորդակցութիւնը Մեղրից Օրդուբաթ տանող ճանապարհով ստուեր վտանգաւոր է դառնում մեր ամբողջ շրջանի համար։

Փիփ (Զանձակի գաւ.) 5 օգոստոսի

Մի քանի օր առաջ, գիշեր ժամանակ, անյայտ թուրքեր գողանում են գիւղից 83 այ... Առաւօտեան տեղիս տանուտէրի օգնականը մի խումբ երիտասարդների հետ, հետամուտ լինելով, գնում են հարևան Ամիրվար թուրք գիւղը։ Հաւաքելով թուրք ազգացիկներին, յայտնում են, թէ այծերի «իզը» ցոյց է տալիս, որ այստեղ են եկել և անխորժութիւնների տեղիք չը տալու համար առաջարկում են յետ տալ այծերը։

Թուրքերը վերադարձնում են այծերը, որոնցից 3-ն արդէն կերւած են լինում։

Ամսիս 2-ին հարևան Ջաջիդ գիւղից երկու մարդ իրենց սայլերով գնում են գիւղից քիչ հեռու Ցիրալովի կալւածքից խուրձ բերելու։ Այդտեղ նրանց շրջապատում են ու սայլերի եզների հետ անհետացնում։ Հայերը դիմում են հարևան գիւղում ապրող դրագունների սպային։ Վերջինս առաջարկում է հայերին հանգիստ Թողնել, խոստանալով ազատել հայերին իրենց ունեցածքով։ Կրկին յանձին խորաղութեան գիւղացիք որոշում են սպասել։

Մեր կողմերի քուչորներն արդէն իջել են և այդ պատճառով այժմ հայ գիւղացիք, աւելի քան առաջ, վախենում են գողութիւններից ու աւազակութիւնից։

Անընդհատ անձրևները բոլորովին քայքայել են գիւղացու անտեսութիւնը։ Ջը նայած որ ամառն արդէն անցնում է, այնուամենայնիւ գիւղացի՛ք չեն կարողացել խոտերն անգամ հաւաքել։ Կոռ

ԹԻՖԼԻՍ

✦ Երէկ քաղաքում պատերին և սիւներին կպցրել էին մեծ քանակութեամբ «Վիբորգի կոչից». ոստիկանութիւնը շտապով ոչնչացնում էր կոչը։

✦ Սալդատների 2-րդ բատալիոնի 4 զինւորներ փախել են, տանելով իրենց հետ 1... հատ հրացաններ։ Այդ հրացանները գտնելու նպատակով ոստիկանութիւնը օգոստոսի 5-ին ամբողջ օրը խուզարկում էր 1-ին քաղաքամասի բոլոր տները, շրջապատելով նախօրոք ամբողջ քաղաքամասը երկու վաշտ զինւորներով։ Խուզարկութիւնն անցաւ ապարդիւն։

✦ Օգոստոսի 2-ին Թիֆլիսի երկաթուղու կայարանի մօտ պահակաւոր զինւորները ձերբակալեցին Ա. Յովհաննիսեանին և Ա. Փափչեանին. նրանց մօտ մէշօկներում գտնւած են 36 գրվ. վառօդ, 1 խէնչալ, 1000 հատ փամփուշտներ։

✦ Օգոստոսի 5-ին, երեկոյեան մօտ ժամի 7-ին, 6 հոգի չարագործներ յարձակւում են կառքով Կօջոր գնացող երկու տիկինների վրայ և խլում 50 կոպ. 20 րոպէ անց նրանք յարձակւում են Կօջոր գնացող հանրակառքի վրայ։ Ճանապարհորդներից մի քանի հոգի, զինւած լինելով, սկսեցին կրակել. այդ միջոցին վրայ են հասնում ստրաժնիկները. չարագործները փախչում են բուսաբանական այգու մօտ և սկսում կանոնաւոր հրացանաձգութիւն։ Չարագործներից մէկը սպանւած է, իսկ միւսը վիրաւորւած։ Մի քանի ժամից յետոյ գալիս են գաւառապետի օգնական Գուգուշվիլին զօրքով և շրջապատում է ձորը, ուր թագնւած են լինում չարագործները։ Վերջինները թաքստոցից կրակում են զօրքի վրայ. զինւորները պատասխանում են։ Միւս օրը թաքստոցում գտնում են չարագործների մի դիակ։

✦ Ամսիս 5 ին առաւօտեան ժամը 5-ին կողոպտեցին Սօլօլակի փողոցի վրայ շուշեցի Կարապետ Գրիգորեանի խանութը. Կարապետ Գրիգորեանի մօտ Անդր-կասպեան երկրից գալիս է իրենց հին ծանօթ Թադոսեցի 3... տարեկան Սարգիս Աւագեանը և գիշերները ապրում էր Գրիգորեանի տանը։ Ամսիս 5-ի առաւօտեան վաղ վեր կենալով Սարգիսը հանում է Գրիգորեանի գրպանից խանութի և կասսայի բանալին, մտնելով խանութը բաց անում կասսան և վերցնում է Կարապետի կասսայում ունեցած 5500 րուբլու արժողութեամբ իրեղէնը և անյայտանում է։

✦ Բարեգործների ուշադրութիւնն են դարձնում II գիմնազիայի աշակերտուհի Ս. Վ-եանի նիւթական անապահով դրութեան վրայ։ Օրիորդը, հնարաւորութիւն չունենալով տալ ուսման վճարը, ժամանակաւորապէս հեռացւած է գիմնազիայից։ Նւէրներն ընդունւում են «Ալիքի» խմբագրատանը։

✦ Ստացանք Վարանդայի և Շուշու զինւ... օգտին Արսէն Խախանեանցի միջոցով Բագւի Հայ-գիւղի մի խումբ տիկինների ջանքերով տւած մի երեկոյթի արդիւնքը 84 ր. 50 կ։

✦ Ստացանք՝ Վ. Լիբկնեխտի «Երկու աշխարհ» գրքոյկը. Թարգ. Հ. Յով. եր. 87. գինն է 15 կոպ։

ԿՈՎԿԱՍ

✦ Կողբ։ Կիրակի, յուլիսի 30-ին, տեղիս ս. Երրորդութեան եկեղեցում պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարւեց Վասպուրականի ընկած հերոսների յիշատակին։ Հոգեհանգստից յետոյ Ա. Աստւածատրեանը համառօտ կերպով Թւեց 96 թւի Վասպուրականում ընկած հերոսների քաջագործութիւնները և համեմատեց հայերիս անցեալը ներկայի հետ։ Իսկ Կ. Գասպարեանը Թաւցիկ կերպով թւեց Դաշնակցութեան հիմնադիր անմահ Քրիստափոր Միքայէլեանի հայ ազգին մատուցած և նրան հետևող հերոսների գործունէութիւնը Տաճկահայաստանում, որոնք յեղափոխութեան կարմիր ճանապարհի վրայ կնքեցին իրենց մահկանացուն։

✦ Ախալցխա։ Ինչպէս յայտնի է, քաղաքիս ս. Փրկիչ եկեղեցու կայքերի արդիւնքը

գործադրում է գլխաւորապէս Ախալցխայի հայ երկսեռ ուսումնարանների վրայ: Իսկ միւս կողմից, մեր շրջակայ հայ գիւղերը, ամբողջ Ախալքալաքի վիճակը, որոնք նոյն իրաւունքն ունեն, օգտուելու այդ արդիւնքից, սակայն մինչև այսօր զրկւում են և մեծամասնութիւնը նիւթական սղութեան պատճառով չունենն ուսումնարաններ և ազխատ թեան մէջ արխափում են: Հէնց մեր Ախալցխայի 13 հայ գիւղերից, միայն Ծուրդութ գիւղն ունի մի մասնաւոր դպրոց. այն էլ դատապարտուած է այս տարի փակւելու, որովհետև գիւղացիք, առանց օժանդակ միջոցների, անկարող են իրենց միջոցներով պահել: Դրա համար էլ այժմ Ծուրդութ ու Ծիրայ գիւղերից բազմաթիւ ստորագրութեամբ մի խնդրագիր են ներկայացրել միրձաւոր հոգ. իշխանութեանը, որ ս. Փրկիչ եկեղեցու եկամուտից իրենց դպրոցին էլ բաժին հանեն, իբրև Կարնի գաղթականների. ինչպէս լսում ենք, նոյն պահանջով դիմել են Ախալքալաքից էլ: Գիւղացիների այս արդար պահանջին մեր ծխականների մի որոշ մասը, գլուխ տաւած կոմիսակի միութիւնով, յուլիսի 23-ի ժողովին բացասաբար վերաբերուեց. սակայն յոյս ունենք, որ ժողովրդի բանիմաց մասը համակրանքով կը վերաբերի գիւղացիների պահանջին և կը տայ հնարաւորութիւն, որ յիշեալ գիւղացիք էլ, մաս ստանալով եկեղեցուց, կը կարողանան իրենց մատաղ սերնդի համար տարրական կրթարաններ բանալու: Մանաւանդ որ նրքա իրաւարանական տեսակէտից էլ միանգամայն իրաւունք ունեն պահանջելու, իբրև Կարնոյ գաղթականներ: Դրանով թերևս վերջ դրուի խառնակութիւններին, որ կատարւում են Ախալցխայում ս. Փրկիչ եկեղեցու խոշոր գրամագլխի շուրջը…

◆ Տամշաղին գաւառամասի Թամթլու գիւղից անհետացրած, նոյն գիւղի ծխատէր Գրիգոր քահանայ Զիլթչեանցի դիակը գտնուած է:

◆ Անասնաբուժական ու անանախանձելի է մեր գիւղերի տըղքատ, երկրագործ դասակարգի ներկայ տարւայ վիճակը. կարծես բնութիւնն էլ է մեզ վրայ զայրացել, մեղանից երես դարձրել:

Այս տարւայ ցորենի ցանքսերը առատ հունձ էին խոստանում երկրագործ հասարակութեանը և բաւարար արդիւնք էլ պիտի ստանայէր, եթէ յունիս ամսի 10-ից մինչև յուլիս ամսի 29-ը, ամեն օր և օրը 3-4 անգամ յորդահոս և անընդհատ տեղացող անձրևները չը փչացնէին հնձած ու արտերի մէջ խուրձակ դարսած ցորենները:

Գիւղացիների դրութիւնը շատ ծանր է. անհրաժեշտ է կողմնակի շուտափոյթ օգնութիւն:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Լօնդօնի լրագրների Պետերբուրգի թղթակիցները հաղորդում են, որ Պետերհօֆում հարց է յարուցուած կազմել նոր մինիստրութիւն կոմս Վիտտէի նախագահութեամբ:
«Р. С.»

◆ Ներկայ մինիստրութիւնը մտադիր է յայտարարելու իր գործունէութեան ծրագիրը և ապա կոչ անել ժողովրդին աջակցելու մինիստրութեան իրագործելու մի շարք օգտաւէտ ռէֆօրմներ:

Ռէֆօրմների խոստումներն անընդհատ թափւում են կարծես թէ առատութեան եղջիւրից, իսկ ռէֆօրմները չը կան ու չը կան…
«Св. Ж.»

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը շտապով ձեռնարկելու է առաջիկայ Պետ. Դումայի ընտրութիւնների սիստէմի ու կանոնների մշակմանը: Կառավարութեան գլխաւոր նպատակն է ընտրողական այնպիսի կարգեր ստեղծել, որ հնարաւոր լինի միշտ հսկել ընտրութիւնների ընթացքին և անհրաժեշտ բոպէին ձեռնամուխ գործ դնել, որպէսզի ձախակողմեան տարրերը մուտք չը գործեն Դումա: Գալառական շրջաններում հաստատ որոշուած է ստեղծել իր հրամաններին հլու Պետական Դումա և նրա օգնութեամբ հաստատել խսկական ռուսական պետական կարգեր:
«Р. В.»

◆ Նէժինից «ХХ В.» թերթին հաղորդում են որ Գլինսկի անապատը բերուած է նոր պատկեր, ուր նկարուած է «վերջին դատաստանի» օրը. մեղաւորների շարքում, որոնք այրւում են գեհէնի կրակի վրայ, զետեղուած է նաև Լև Տօլստոյի նկարը…

◆ Պետերբուրգում յուլիսի 31-ին ձերբակալուած են 60 հոգի սօցիալիստ-յեղափոխականներ:
«Б. В.»

◆ Պետ. Դումայի նախկին անդամ Օնիպկօն ներկայումս գտնւում է Կրօնշտադտի բանտում: Նրա դատը կատարելու է զինուորական դաշտային դատարանը, առաջիկայ շաբաթւայ ընթացքում: Լուր կայ, որ նրան պաշտպանելու է նախկին պատգամաւոր Կուզմին-Կարաւաևը:
«Нов. Вр.»

◆ Ներկայումս զինուորական դրութիւն է յայտարարուած 40 նահանգներում ու շրջաններում, ուժեղացրած պահպանութիւն՝ 15 նահանգներում ու շրջաններում, արտակարգ պահպանութիւն՝ 27 նահանգներում ու շրջաններում. հետևաբար Ռուսաստանի 87 նահանգներից ու շրջաններից բացառիկ օրէնքներից ազատ են մնացել միայն 5-ը…
«Св. Ж.»

◆ Կրօնշտադտի կօմենդանտ գեն. մայոր Ադլերբերգը յուլիսի 30-ին ստացել է կայսրից յետևեալ հեռագիրը. «Ձեր եռանդուն ծառայութեան համար տալիս եմ ձեզ գեն. լէյտենանտի աստիճանը: Նիկօլայ»:
«Б. В.»

◆ Պետերբուրգում յուլիսի 30-ին տեղի է ունեցել կրկին մի շարք ձերբակալութիւններ սօցիալիստ-յեղափոխականների մարտական խմբի անդամների: Բռնուած են ձերբակալութիւնների ժամանակ մեծ քանակութեամբ զէնք, պայթուցիկ նիւթեր, ռումբեր, փամփուշտներ, և բացի այդ նշանաւոր թղթեր, որոնցից երևում է, որ պատրաստութիւններ են տեսնւում զինուած ապստամբութեան համար:
«Пет. Л.»

◆ «Ազգայ վերածնութեան» կուսակցութեան ծրագիրը, ասում են, վարվում է կառավարչական շրջանների մեծ համակրանքը: Համարւում է իրագործելի կուսակցութեան ընդունած ընտրողական ծրագիրը, որով առաջարկւում է ընտրողական իրաւունքի ուղղակի սիստէմը մտցնել քաղաքներում, իսկ գիւղերում հաստատել երկաստիճան ընտրողական իրաւունք: Կառավարութիւնը ոչ մի կերպ չէ կարողանում միայն հաշտուել մասնաւոր կալուածատէրերի հողերի ստիպողական գրաւման սկզբունքի հետ:
«Р. С.»

◆ Սև հարիւրակային կազմակերպութիւնների յանդուգն գործունէութիւնն անցնում է ամեն չափ ու սահման… Նօվգորոդում այդ կազմակերպութիւնները տարածել են մի կոչ, որով հրաւիրում են ծեծել 18 անձնաւորութիւնների. դրանց անուն-ազգանունները լրիւ բերուած են կոչի մէջ…
«Р. С.»

◆ Մոսկւայի քաղաքապետն արձակել է երկու քաղաքապահներին, շնորհիւ նրանց անբարեխղճութեան:
«Св. Ж.»

◆ Մոսկւայում հիմնւում է կրօնական փիլիսոփայական ընկերութիւն ի յիշատակ պրոֆ. Վ. Սօլովեօվի: Ընկերութեան կանոնադրութիւնն արդէն հաստատուած է:

◆ «Прав. Вѣстн.»-ում լոյս է տեսել Պետերբուրգի դատաստանական պալատի դատախազի մի գրութիւն, որով դատախազը յայտնում է, թէ ինքը դեռ յուլիսի 15-ից առաջարկել է Պետերբուրգի շրջանային դատարանի քննիչ Բէլեցօվին կատարելու նախնական քննութիւն ու պատասխանատուութեան ենթարկել Պետական Դումայի այն բոլոր անդամներին, որոնք ստորագրել են Վիբորգի կոչը ժողովրդին: Պատգամաւորները մեղադրւում են քրէական օրէնսգրքի 61-դ և 129-դ յօդւածի I մասի 3-դ կէտի հիման վրայ:

◆ «П. Лист.»ին հաղորդում են Կիրիլօվի գաւառից. «Այժմ սկսել են պետական հարկերն ու տուրքերը ժողովել զինուորական ույժով: Իսպրաւնիկը 16 ստրաժնիկներով ու մի խումբ զինուորներով պտտում է գիւղերը հարկեր հաւաքելու. չը նայած դրան գիւղացիներն խիստ հրաժարւում են հարկերը վճարելուց»:

◆ Կարմիր գուարդիայի հրամանատար Կօկի ձերբակալման լուրը ճիշտ չէ:
«Н. Ж.»

◆ Պետական Խորհրդի աշնանային սեսսիան սկսելու է հոկտեմբերի սկզբին:
«П. Л.»

Մ Ա Մ Ո Ւ Լ

Դրութիւնը Բալկաններում հետզհետէ աւելի է բարդւում: Մինչդեռ Մակեդօնիայի ճնշուած ժողովուրդներն արիւն էին թափում տարրական ազատութիւն ձեռք բերելու համար և Թիւրք կառավարութիւնը, ի հարկէ, իր անլուր գազանութիւններն էր գործադրում, եւրոպական «քրիստոնեայ» պետութիւնները, երկիրը խաղաղացնելու և գազանութիւններին վերջ տալու պատրուակով. իրենց տմարդի խաղը խաղացին և «Նրն ուղղելու փոխարէն աչքն էլ հանեցին»: Միւրցշտէգն էր այն բեմը, որի վրայ խաղացեց եւրօպական միջամտութեան խայտառակ կատակերգութիւնը, որը կոտրելով ապստամբ մակեդօնացիների յեղափոխական թափը, դանազան քաղաքական ինտրիգների ասպարէզ դարձրեց նրանց դըժբախտ հայրենիքը:

Տխմար յոյն շօվինիստների և կղերի ոտնձգութիւնները, Ռումինիայի պրետենզիաներն ու կուցօվլախների խնդիրը, սերբ-բուլղարական միջամտութիւնը,—այդ բոլորը միացել, խճճուել և մի հանգոյց են կազմել, որն աւելի ևս անլուծելի է աշխատում դարձնել թիւրքական անիծեալ պրօվօկացիան:

Իսկ այդ բոլորի հանդէպ ռուս-աւստրիական ինտրիգը իր «քաղաքացիական պահանջներ» խնդրովն է գրաղւում և նրանցից է ակընկալում Մակեդօնիայի «փրկութիւնը»:

Աւստրօ-վենգերական արտաքին գործերի մինիստր Գօլուխովսկու պարծենկոտ յայտարարութիւնը,—ասում է «Р. Вѣд.»,—իբր թէ ռէֆօրմների գործը Բալկաններում առաջ է գնում և լաւ յոյսեր է տալիս, ժխտւում է փաստերով: Աւստրօ-ռուսական դաշնակից դիպլօմատիայի հանգստացնող միջոցները և առաջադրութիւնները մինչև այժմ ոչ մի վրայ չեն ազդել: Մակեդօնիայի դրութիւնը նոյնքան անելանելի է, որքան առաջ…

Դժւար է կասկած չը տածել, որ մէկը սիստէմատիքաբար անելութիւն է սերմանում Բալկանների քրիստոնեայ ազգութիւնների մէջ: Ցամենայն դէպս երկրի այդպիսի դրութիւնը ձեռնտու է Թիւրքիային. Նրա դերը պարզ է, նրա չը միջամտելը հասկանալի: Անհասկանալի է սակայն եւրօպական պետութիւնների դերը և տարօրինակ է նրանց դրութիւնը: Միւրցշտէգի ծրագիրը հէնց այնպէս ծրագիր էլ մնաց. պետութիւններն անօգնական են, Դուռը կարող է գոհ լինել: Եւ միշտ այդպէս է. «մեծ» պետութիւնների միջամտութիւնը միշտ վերջանում է նրանով, որ Դուռը «գոհ է մնում»: Վայ նրանց, որոնք՝ յոյս դնելով այդ միջամտութեան վրայ, զէնքը ցած կը դնեն…

* * *

Պարսկաստանի անարիւն յեղափոխութիւնը և ստացած սահմանադրութիւնը շատերի իրաւացի զարմանքին և հիացմունքին է արժանանում: Առանձնապէս այդ զգացմունքներն առաջանում են այն պատճառով, որ ռուսական յեղափոխութիւնը դեռ իր ընթացքի մէջ է և շարունակւում է բազմաթիւ զոհեր տանել և մարդ չի նախատեսում նրա հաւանական վերջաւորութիւնը:

Բայց չը պէտք է մեծ յոյսեր ունենալ պարսկական ապագայ պետական կազմի վերաբերմամբ: Պարսկաստանը իր զարգացման դեռ այն շրջանումն է, որ մօտիկ ապագայում ուժերի փոխադարձ յարաբերութիւնն այնտեղ չէ կարող շատ բան խոստանալ: Ամենից շատ շահագրգռուած և իրաւազուրկ տարրը այնտեղ գիւղացիութիւնն է, որ իր ճնշող մեծամասնութեամբ կալուածատէրերի կամայականութիւններին է ենթարկուած: Ուստի շատ նախ է այն ոգևորութիւնը, որ արտայայտում է «Русск. Сл.» թերթը հոգևորականութեան խաղացած դերի մասին ներկայ մոմէնտում—

Բացի կառավարող շրջաններից,—ասում է թերթը, որոնք տակտով և խոհականութեամբ վարուեցին, մեծ դեր խաղաց և հոգևորականութիւնը, որի գլուխն էր կանգնած շէյխ Մուհամմէդը, կրակոտ հռետոր և հին րէժիմի թշնամի: Պարսից հոգևորականը ժողովրդի հետ ձեռք-ձեռքի տուած է գնում, և երբ հոգևորականութեան ժողովը դիմեց ժողովրդին, անմիջապէս խանութները փակուեցին և երկրի ամբողջ առևտուրն ու արդիւնաբերական կեանքը կանգ առաւ:

Եթէ յիշենք, որ Պարսկաստանում հոգևորականութիւնը կալուածատէր դասակարգի մի խոշոր մասն է, որ իր ձեռքն է հաւաքել բազմաթիւ գիւղացիութիւնը և նրա աշխատանքի արդիւնքը ամենաանխիղճ կերպով իւրացնում է, այն ժամանակ պարզ կը լինի, թէ այդ հոգևորականութիւնը այս յեղափոխութեան գլուխ է անցել միայն ապագայ սահմանադիր կարգերում իր տիրապետութիւնն ապահովելու համար, որին պարսկական կառավարութեան կողմից միշտ վտանգ է սպառնացել, սկսած Նասր-էդդին Շահի օրերից: Այդ իսկ պատճառով հոգևորական դասը իր յատուկ պատգամաւորն է ունենալու Ներկայացուցչական ժողովում և բուրժուա-կալուածատիրական հոսանքի գլուխ է կանգնելու, մինչև որ աշխատաւոր մասսան գիտակցութեան կը գայ և երես կը դարձնի նրանից:

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՔՐՈՆԻԿ

Օգոստոսի 4-ի երեկոյեան, ժամը 8-ին, քաղաքային տան դահլիճում տեղի ունեցաւ Թիֆլիսի գնապանների գործադուլային բիւրօի, քաղաքային վարչութեան ներկայացուցիչների և լիազօրների ընդհանուր խորհրդակցութիւնը՝ գնապանների այսօր սպասելիք գործադուլի առթիւ:

Դնապանների ներկայացուցիչները պնդում էին իրենց պահանջների վրայ, որոնք յայտարարուած են առանձին թռուցիկով: Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ քաղաքային վարչութիւնը և նրա լիազօրները երկու օր առաջ միայն տեղեկութիւն են ստացել գնապանների պահանջների մասին, չը նայելով որ թռուցիկը ութ օր առաջ էր հրատարակուած,—երկար խորհրդակցութիւնից յետոյ առաջարկեց յետաձգել գործադուլի հարցը մինչև ամսի 20-ը, քննութեան առնելու այդ պահանջները և բաւարարութիւն տալու միջոցների մասին մտածելու:

Գործադուլային բիւրօն, առանձին խորհրդակցութիւնից յետոյ, որոշեց ընդունել այդ առաջարկը՝ միայն մի պայմանով,—որ մինչև այդ նշանակած ժամանակամիջոցը ոչ մի դռնապան արձակուած չը լինի:

—

Քաղաքային Դումայի բանուորները, որոնք առաջարկել էին մի շարք պահանջներ, ստացել են բաւարարութիւն, միայն թէ սեղնակի վարձը խոստանում են տալ առաջիկայ յունուար ամսից. այդ պայմանն էլ ընդունեց բանուորների կողմից:

—

Կարսի կօշկակարները և խարազները կազմակերպելով իրենց արհեստակցական միութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի տակ, յայտարարել են գործադուլ՝ առաջադրելով մի քանի կարևոր տնտեսական պահանջներ. որոնք են.

1. Աշխատել առ. ժ. 7-ից մինչև երեկ. ժ. 7-ը, ճաշին 1 ժամ հանգիստ:
2. Առաւօտեան թէյ, հաց և պանիր վարպետի վրայ:
3. Ճաշի համար օրական 15 կոպ.:
4. Ամսով աշխատողների ռոճիկը դարձնել տարեկան՝ բանուորների համաձայնութեամբ:
5. Աշակերտներին աշխատեցնել միայն արհեստանոցում:
6. Արժանաւոր աշակերտներին վարձ տալ 2 բանուորի և 2 վարպետի միջոցով:
7. Քաղաքավարի վերաբերմունք:

Բանուորները նշանակել են նաև որոշ տեսակի կօշիկներ կարելու համար որոշ աշխատավարձ:

—

Բագւի մի խումբ նաւթարդիւնաբերողներ մեծ եռանդով սկսեցին կազմել «Նաւթարդիւնաբերողների միութիւն», որի գլխաւոր նպատակը պիտի լինէր պիմադրել բանուորական գործադուլներին: Պէտք է նկատել սակայն, որ այդ ծրագիրը յաջողութիւն չունեցաւ, չը նայած թափած մեծ ջանքերին:

—

Միրզաբէգեանի ծխախոտագործարանի (Բագու) բանուորների գործադուլը վերջացել է և օգոստոսի 1-ից գործարանում վերսկսել է աշխատանքները: Բանուորներն իրենց գլխաւոր պահանջների բաւարարութիւնն ստացել են արդէն:

—

Կարսի ջուխալական ապրանքների [illegible] …նիների ար… է ապրանք… շարք պա… [illegible] գործ… [illegible] …ից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՃԱՊՕՆԻԱ.

Պատերազմից յետոյ «North American Rewiew»-ի վերջին համարում յայտնի նիւ-իօրկցի բանկիր և բարեգործ Հ. Շիֆը մի փոքրիկ յօդուած է գետեղել «Ճապօնիան պատերազմից յետոյ» խորագրով: Նա երկար ճանապարհորդել է Ճապօնիայում, տեսնուել է կայսեր հետ, խօսել է պետական գործիչների հետ և կարողացել է մօտիկից դիտել ու ծանօթանալ երկրի դրութեանը: Շիֆը այն կարծիքին է, որ Ճապօնիան չէր կարող յաջողութեամբ վարել իր մեծ պատերազմը Ռուսաստանի հետ, եթէ չը լինէր անգլօ-ամերիկական բարեկամութեան վրայ: Վերջինների ցոյց տուած պաշտպանութիւնը միանգամայն արդարացի էին, որովհետև Ճապօնիան իր պատերազմով պաշտպանում էր ոչ միայն իր գործը, այլ և ամբողջ քաղաքակրթուած աշխարհի: Բացելով Կօրէայում և Մանջուրիայում նոր շուկաներ, Ճապօնիան կը վարձատրէ իրեն պատերազմի բոլոր անթիւ զոհերի համար:

Ճապօնացիների մասին հեղինակը առհասարակ շատ լաւ կարծիք ունի: Երկրի բնական հարստութիւնը, ըստ երևոյթին, մեծ չէ. սակայն ճապօնացիների աշխատասիրութիւնը և եռանդը լրացնում է այդ պակասը: Կօրէայում և Մանջուրիայում շուկաներ բացելով, Ճապօնիան ցոյց կը տայ իր ամբողջ ոյժը, իբրև մի արդիւնաբերական ազգ. և տասը տարուայ պետութիւնները կը համոզուեն, որ «դեղին վտանգի» խօսակցութիւնները իրենց շատ էլ չեն օգնել: Այժմ և էթ բոլորի համար պիտի պարզ լինի, որ Ճապօնիան է լինելու Հեռաւոր Արևելքի տիրապետող գործօնը: Եւ այդ է, Շիֆի կարծիքով, որ կապահովէ յարատև խաղաղութիւն Հեռաւոր Արևելքում:
«Фр. Вѣд.»

—

Ռուսաստանը եւ եւրօպական մամուլը Daily News»-ը մի յօդուած է նւիրել գերմանական կայսեր և անգլիական թագաւորի տեսակցութեան մասին՝ հաղորդելով, որ այդ միջոցին խորհրդակցութեան առարկայ է դարձել նաև ռուսական հարցը: Ցայտնել է այն կարծիքը՝ որ եթէ ներկայումս հնարաւոր է որև է կերպ արգելել ռուսական միապետութեան անկումը, ապա այդ հնարաւոր է միմիայն նրանով, որ ցարը նորից հրաւիրէ Դումա և կազմէ նրա ցանկութիւններին համապատասխան կառավարութիւն. թէ՝ ներկայ ժամանակում Գերմանիան և Մեծ Բրիտանիան չը պէտք է նորոգեն իրենց հին գժտութիւնները, ընդհակառակը նրանք սերտօրէն պիտի միանան իրար հետ և նախապատրաստուեն սպառնալից փոթորիկների հանդէպ:

Այս բանի առթիւ գերմանական յայտնի պանգերմանական թերթը՝ «Post»-ը ասում է. «Ինչքան էլ ուրախալի լինեն ընդհանրապէս առած անգլիական թերթի նկատողութիւնները, բայց մենք պէտք է յայտնենք, որ համաձայն չենք «ռուսական հարցի» վերաբերմամբ նրա ունեցած հայեացքի հետ: Գերմանիայում յատկապէս այժմ վստահութիւն են տածում դէպի ռուսական կառավարութեան եռանդը և խոհականութիւնը, և բնաւ աւելորդ չեն տեսնում խօսելու այն մասին, թէ որև է կերպ հնարաւոր կը լինի միջամտելու ռուսական գործերին կամ ազդելու նրանց վրայ: Անտարակոյս հաւանական է, որ երկու մեծ պետերը խօսակցութեան առարկայ են դարձրել ընդհանուր քաղաքականութեան վերաբերեալ մի քանի խնդիրներ, որոնց թւին, իհարկէ, պատկանում է նաև ռուսական կրիզիսը: Ինչքան էլ նշանակալից է երկու ազգական միապետների տեսակցութիւնը, որից մենք ևս անգլօ-գերմանական յարաբերութիւնների համար լաւագոյն հետևանքներ ենք սպասում, բայց և այնպէս հարց լինել չի կարող խօսակցութեան այդ կարևոր նիւթի այդպիսի քննութեան մասին»:

«Fr. Zt.»-ի Կէօնիգսբէրգի թղթակիցը երկար խօսակցութիւն է ունեցել նախկին Դումայի անդամ փաստաբան Դ-ր Նակօրզօի հետ, որը երկու ուրիշ ռուս պատգամաւորների հետ Բէլօստօկ էր գնացած եղել պօգրօմների պատճառները քննելու համար: Նակօրզօն համոզուած է, որ ռուսական կառավարութիւնը ոչ մի կերպ չի կարող գոյութիւն ունենալ առանց Դումայի: Այս հաստատութիւնը չէ եղել սոսկ խօսարան, այլ ժողովրդի ամենատխուր յոյսերի և ցանկութիւնների կենտրօնատեղին: Ամբողջ ժողովուրդը անվստահօրէն է վերաբերում կառավարութեանը: Նոյնիսկ այն ժամանակ, եթէ կառավարութիւնը յիրաւի փորձէր լիբերալ ռէֆօրմներ անել, ոչ ոք չէր հաւատալ: Կառավարութիւնը միայն այն ժամանակ կարող է դրական հետևանքներ սպասել և երկիրը խաղաղած տեսնել, երբ նա, ինչպէս պահանջում է սահմանադրութիւնը, կրկին Դումայի հետ աշխատէ: Դրա հետ միասին անհրաժեշտ է նաև ագրարային հարցի լուծումը՝ Դումայի մարով: Հող և ազատութիւն է պէտք նրանց, ովքեր հողը մշակել են ուզում: Եթէ կարճ ժամանակում գիւղացիները չը ստանան հող, այն ժամանակ նրանք իրենք կը խլեն հողը և Ռուսաստանը կը տեսնէ մի սարսափելի գիւղացիական յեղափոխութիւն: Ընդհանուր գործադուլի յաջողութիւնը ներկայումս կասկածելի է համարում Նակօրզօն:

ԹԻՒՐՔԻԱ.

Պետերբուրգի դիւանագիտական շրջաններում եռանդուն գործունէութիւն է նկատւում կ. Պօլսից եկող խառնաշփոթ լուրերի պատճառով: Անգլիայի և Գերմանիայի ներկայացուցիչների ու մեր դիպլօմատների միջև տեղի ունին կարծիքների փոխանակութիւն: Արտասահմանի դիւանագիտական ներկայացուցիչներին ուղարկուած են համապատասխան հրահանգներ: Ասում են, որ Գերմանիայի և Անգլիայի միջև սկսուած են բանակցութիւններ Բալկանեան թերակղզու վրայ տեղի ունեցող դէպքերի առթիւ և ցոյց են տալիս այդ բանակցութիւններից բղխող աննպաստ հետևանքները Ռուսաստանի համար: Վիլհէլմի և Էդուարդի առաջիկայ տեսակցութիւնը երևից է ներշնչում գլխաւորապէս սուլթանի լուրջ հիւանդութեան պատճառով: Ռուսաստանը կարող է բոլորովին կղզիացած մնալ մի այնպիսի ժամանակ, երբ Բալկանի վրայ տեղի կունենան խոշոր դէպքեր: Մեր դիւանագիտութեան գործունէութիւնն ուղղուած է այդ վտանգի դէմ:
«Р. С.»

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ «ՄՇԱԿԻ» ԷՆ-ԷՆԻՆ

I

Ախալքալաք, 1 օգոստ.

Համբերատար «Մշակի» 164-րդ համարում կարդացի Էն-Էնի նամակը, որով պարոնը «ապատամբ» «Մշակը» զարդարել է իր «ազատամտութեան» գոհարներով:

Պէտք է խոստովանել, որ Էն-Էնը գրելու մեծ եռանդ ունի և իր էութեան ու պրաւստանութեան յարմար թերթում էլ սկսել է իր գրական մարզանքները, և ինչու չը գրել, քանի որ ասպարէզ կայ տեսնելու ու կեղծելու և այդ բոլորը լոյս հանելու «ազատ» ասպարէզ, «ազատ» «Մշակի» «ազատ» էջերում. և մանաւանդ որ կայ Դաշնակցութիւն, որի պոչից կարելի է քաշ տալ:

Պ. Էն-Էնը իր նամակով նախ ներկայացնում է ժողովի ընդունած բանաձևերը և ապա ըստ իր բարեպաշտական պրօֆէսսիայի և հոգեբանութեան, կրկնելով սաղմոսից մի կտոր ճառում է՝ «ժողովում նկատւում էր երկու հոսանքներ—մէկը Դաշնակցութեան, միւսը բուրժուազ գիւղացիութեան, որ չէր ուզում կուլ գնալ քաղաքիս ազգային ռամիկան դեկավարներին… Պատգամաւորներից մի քանիսը, երբ նկատեցին, որ մի նոր եկուորին, որ իր արտաքին տեսքով ու մտածողութեան եղանակով Թիֆլիսի Թամամշեւի քարվանսարայի «շլափշիկների» տպաւորութիւն էր թողնում, աշխատում էր իր անմիտ ճառամաթան ճառերով ժողովը երկարացնել և ընտրութիւնները յետաձգել—հեռացրին ժողովից ևն»:

Ճիշտ է ժողովում նկատւում էր երկու հոսանք, բայց ոչ Դաշնակցութեան ու գիւղացիների, այլ վերջիններիս ու քաղաքացիների, այն էլ շնորհիւ պ. Էն-Էնի նման աչքակապների ու օյինբազների:

Այն ժամանակ, երբ ինքնագիտակցութեան եկող աշխատաւորները, նոյն իսկ արհեստ գնով աշխատում են ձեռք գցել համերաշխութիւն, դուրս էք գալիս, պ. Էն-Էն, դուք և ձեզ նման «սօցիալիզմի» անունը շահագործողներդ և առանց ամօթի, առանց կարմրելու, ի հարկէ, եթէ միայն ձեր կաշին այդ ընդունակութիւնը ունի, կանչում էք «գիւղացիներ հեռու մնացէք քաղաքացիներից, վերջիններս ձեզ շահագործում են» և այլն:

Այո, «նոր եկուոր», «Թամամշեւի շլափշիկը» երկար էր խօսում, բայց ոչ թէ ժողովը խանգարելու նպատակաւ, ոչ, այլ որպէսզի ցոյց տայ, որ դուք և ձեզ նման «սօցիալիստները» խաբեբաներ ու ստախօսներ էք, որ դուք շնորհիւ ձեր կեղտոտ միտումների արժանի էք բազմելու բիւրօկրատիայի աջ կողմը, որպէս անխիղճ գործակիցներ, ճակատներդ ունենալով «բաժանիա գի տիրեացիա յօզունդը»:

«Ճշմարտախօս» Էն-Էն, դաշնակցական «նոր եկուորին» դուրս արին իբրև դաշնակցականի, բայց չէ որ միևնոյն բանը պահանջել են նաև մի ուսանող սօցիալ-դեմօկրատից, և չը լինի առ էլ «բռնութիւններ» էր գործ դրել. ոչ, սուտ էք խօսում, թէ առաջինը և թէ երկրորդը դուրս արեցին նրա համար, որովհետև նրանք առանց կեղծելու պարզեցին հոգևորականութեան կատարած խայտառակ դերը և պատռելով նրա դիմակը, պատռում էին նաև ձեր դիմակը իբրև կղերականութեան հլու քծնողների և փարսեցի երկրպագուների:

Շարունակենք կարդալ բարբաջանքները. «դաշնակցական պատգամաւորները… երբ նկատեցին, որ իրենց թեկնածուները չեն անցնելու, երևան հանեցին առաջնորդի մի գրութիւն, որով նա ապօրէն կերպով գաւառը բաժանել է 3 մասի… յետոյ որ ս. Էջմիածին զրկել է Ախալք. գաւառի ազգաբնակութեան $^1/_4$ մասին իր ներկայացուցիչն ունենալու, որովհետև Ախալք. Ծալկայի հետ միասին 80000-ից աւել բնակիչ ունի»:

Նախ առաջնորդի գրութիւն դուրս բերողը հ. նախագահն էր, իսկ բաժանել պնդողը Ծալկայի և տեղից գիւղերի պատուիրակների մեծամասնութիւնը, և երկրորդ, եթէ թւերով էք խօսում, գոնէ նկատի բաշէիք ծանօթանալ ստատիստիքական տեղեկութիւնների հետ. վերջինս ցոյց է տալիս, որ Ախալք. գ. Ծալկայի հետ հազիւ ունենայ 70000 հայ բնակիչ, ի հարկէ չը հաշուելով «օյինբազ» Էն-Էն և K^o-ին անդամներից իւրաքանչիւրին 1000-կան մարդ:

Դուք գրում էք, «դաշնակցականները սևացան և նրանց հետ Հ. Օհանջանեանը», բայց իրողութիւնը կը վկայէ, որ նախ Հ. Օ-նը չընտրուեց իբրև քաղաքացի և երկրորդ ընտրութիւններից երկուսը Եղ. Ս. և Ա. Ս. դաշնակցականներ են:

Եւ այդպէս անվերջ ստախօսութիւններ, որոնք կազմում են պ. Էն-Էնի թղթակցութիւնը «Մշակում»:

Դրանց բոլորին պատասխանելը անհնարին է «Ալիքի» սուղ էջերում. ուստի բաւականանում ենք միայն այսքանով, յոյս ունենալով, որ ընթերցողներն արդէն առաջ բերած նմուշներից էլ գաղափար կը կազմեն, թէ ինչ այլանդակութիւն է ծածկուած «Էն-Էն» անուան տակ:
Արտաշէս

II

Գանձակ, 4 օգոստոսի

Մի խումբ դաշնակցական երիտասարդներ սրանից մի քանի ամիս առաջ ձեռնարկեցին մեզ մօտ հիմնել մի գրադարան, որպէս յարգանք և յիշատակ իրենց ամենասիրելի ընկեր և հայրենակից Ստեփանեանի, որը հերոսաբար նահատակուեց Զանգեզուրում անցեալ տարւայ դեկտեմբեր ամսում:

Այդ պատճառով, աչքի առաջ ունենալով գրադարանի վերին աստիճանի սուղ միջոցները (ընդամենը մի քանի հարիւր գիրք) պարտք ենք համարում դիմել դրսի բոլոր այն մարդկանց, որոնք յարգում են Ստեփանեանի յիշատակը և խնդրել—ցոյց տալ իրենց աջակցութիւնը, գրադարանը հարստացնելու դրամական միջոցներով, նուէրներով ևլն:

Նուէրները կարելի է ուղարկել հետևեալ հասցէով.

Елисаветполь. Книжный магазинъ Аршака Мискарянца.

Ի դիմաց երիտասարդութեան. Զարմայր

III

Թիֆլիս 3 օգոստոսի

Ինձ համար վերին աստիճանի անախորժ է անձնական բանակռւով զբաղուել, մանաւանդ այժմ, երբ ամբողջ Ռուսաստանը և մասնաւորապէս հայ ժողովուրդը վերածնութեան երկունքի մէջ են գտնւում, բայց կան հակառակորդներ, որոնց հետ անկարելի է զուտ գաղափարական բանակռիւ վարել, որովհետև ամեն անգամ, երբ ակնոց էք դարձնում նրանց սխալը կամ սուտը, իսկոյն պղտորում են հարցը անձնական կեղտոտ ակնարկներով ու ինսինուացիաներով, հետևելով այն ջրային կենդանիների տակտիկային, որոնք պղտորում են ջուրը զարշահոտ արտաթորութիւններով, որպէսզի կարողանան պաշտպանուել թշնամուց և փախչել վերահաս վտանգից։

Այդպիսի հակառակորդներից է «Մշակի» աշխատակից պ. Հ. Ա., որի ամբողջ քաղաքագիտութիւնը ամփոփւում է մի առածի մէջ—«Calomniez, calomniez! il en restera toujours quelque chose»—«զրպարտեցէք, զրպարտեցէք, միշտ մի արդիւնք կը մնայ»։

Ինսինուացիաներով սկսեց ինձ դէմ բանակռիւը պ. Հ. Ա., ինսինուացիաներով էլ շարունակում է։ Հետզհետէ լայնացնելով իր ակնարկների սահմանները և շօշափելով իմ գործունէութեան այնպիսի շրջաններ, որոնք ոչ մի կապ չունեն ոչ միայն բանակռւի նիւթի, այլ և առ հասարակ գրականութեան հետ, պ. Հ. Ա. վերջացնում է իր երկրորդ յօդուածը հետևեալ խօսքերով.

«Ես կարծում էի, որ Բարեգ. Ընկ. ընդհանուր ժողովում մերկացրած խայտառակ փաստից յետոյ և մի շարք ուրիշ փաստերից յետոյ, Տ. Ց. խոհեմութիւն կը համարէր առ ժամանակ չը յիշեցնել իրեն հասարակութեան, բայց նրա ուղեղը, որ փչացած չէ հրացանի նման, այդպիսի տարրական էթիկայի խնդիրը ըմբռնելու անկարող է»...

«Մի շարք փաստերը» առեղծուածով բռնուած պ. Հ. Ա.-ի խորին գաղտնիքն են, իսկ ակնարկով յիշած «խայտառակ» փաստը հետևեալն է.

Բարեգործական ընկերութեան նախկին գանձապահ պ. Գ. Մելիք-Ղարագեօզեան («Արշալոյսի» խմբագիրը) ընկերութեան արժեթղթերը 1905 թ. ամառւայ սկզբին բանկից հանել էր և փոխանակ իսկոյն նորից բանկ մուծնելու, ամառւայ վերջն էր յետ տալիս։ Այդ անկանոնութիւն էր և վտանգաւոր անկանոնութիւն, բայց ոչ ոք ժողովում ոչ միայն չը հաստատեց, այլ և չասաց, թէ գանձապահը շահելու նպատակով է արել այդ։ Ցամենայն դէպս, եթէ կայ մէկը, որի ազնւութիւնը կարող էր կասկածի ենթարկել և պատւին արատաւորել այդ փաստի շնորհիւ, դա՝ ընկերութեան նախկին գանձապահ պ. Մելիք-Ղարագեօզեանն է, որ, ինչպէս պարզեց ժողովում, առանց վարչութեան գիտութեան էր արել այդ զանցառութիւնը։

Պարոն Հ. Ա.-ին յայտնի էին այդ բոլոր հանգամանքները։ Նրան շատ լաւ յայտնի էր և այն, որ այդ փաստը չէր կարող արատաւորել վարչութեան անդամների և մասնաւորապէս վարչութեան նախագահի (իմ) պատիւը, բայց պ. Հ. Ա. այնուամենայնիւ այդ փաստի հիման վրայ այնպիսի ակնարկ է անում, որ կարելի է հասկանալ միմիայն այն մտքով, իբր թէ Բարեգործական Ընկերութեան ժողովում «մերկացրած» լինի, թէ ես գողութիւն եմ արել կամ ուրիշ դրա նման մի յանցանք։

Պարոն Հ. Ա. անշուշտ ուզել է մահացու հարուած հասցնել ինձ այդ ակնարկով, բայց փոխանակ սպանութիւն գործելու, ինքնասպանութիւն է գործել։

Այդ յաճախ է պատահում փչացած զէնք գործածողների հետ։ Տ. Ց.

Անցեալ «Արձագանքների» առաջին տողում փոխանակ «հողակոյտ»-ի տպած է «հողակոյտ»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետերբուրգի գործակալութիւնից)

—

4 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հողակալութեան և երկրագործութեան գլխաւոր կառավարիչը մեր թղթակցի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ ասաց. «Հողային ռէֆօրմի լուծումը անհնար է կարճ ժամանակամիջոցում։ Ագրարային քաղաքականութիւնը մինչև այժմ տարւում էր սխալ ճանապարհով։ Ամենից առաջ պէտք է բաւարարութիւն տալ այսպէս անուանուած дарственникъ-ներին, որոնք ազատարար ռէֆօրմի ժամանակ ստացան ամենից քիչ հողաբաժին։ Թէև անկարգութիւնների գլխաւոր մասնակիցները ամբողջ նադէլ ունեցող գիւղացիներն են, բայց յուզմունքների օջախը՝ սակաւահող գիւղացիների մէջ է. դրանց հողաբաժին տալու համար կարելի է վերցնել պետական, ուդել և գնւող հողերը։ Վերջին ժամանակներս վաճառելու համար առաջարկւում են ահագին քանակութեամբ մասնաւորական հողեր։ Ընդհանրապէս—հողային կրիզիսի սրութիւնը կարելի է չէզոքացնել սակաւահող գիւղացիներին բաւարարութիւն տալով, առանց ձեռք տալու մասնաւոր մարդկանց կալուածներին։ Իրական կեանքի օրինակներն ապացուցանում են, որ գիւղացիները հակուած են անցնելու համայնականից մասնաւոր (?) տնտեսութեան։ Մասնաւոր հողերի սեփականական գրաւման օրինական կարգով ստիպուած կը լինենք դիմել լոկ առանձին-առանձին դէպքերում, բայց դա սկզբունք դարձնելը մեծ սխալ է. չէ՞ որ բացարձակ ընդհանուր սակաւահողութիւն Ռուսաստանում չը կայ։ Ստոլիպինեան նախագծի մէջ իշխան Վասիլչիկովը մի քիչ անյաջող է համարում այն կէտը, որտեղ խօսւում է երկու կողմերի սիրալիր համաձայնութեան և հաշտութեան մասին, յորդորների ազդեցութեամբ։

5 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Շրջանային դատարանում առանց երդուեալների մասնակցութեան քննուեց երդուեալ հաւատարմատարներ Զարուդնու, Ելիսէևի, Րօզենտալի, Սիդօրենկօի, Բարսովի և Շվարցի գործի քննութիւնը։ Նրանք մեղադրւում են հոկտեմբերի 15-ին, դատարանի նիստը դադարեցնելու համար, ցոյց սարքելու մէջ։ Դատարանը որոշեց, չը խառնելով գործի քաղաքական կողմի մասին և չը մտնելով մեղադրեալների դրդիչ պատճառների գնահատութեան մէջ, նրանց մեղաւոր ճանաչել 282-րդ յօդ. առաջին կէտի հիման վրայ և 7 օրւայ բանտարկութեան ենթարկել իւրաքանչիւրին։

ՆԻՒ-ԵՕՐԿ. Վալպարայսօյում երկրաշարժ տեղի ունեցաւ։ Բոլոր տները վնասուած են, գիշերւայ ընթացքում հրդեհներ առաջացան, հարիւրաւոր մարդիկ կորան փլատակների տակ, հեռագրական հաղորդակցութիւնը ժամանակաւորապէս ընդհատուած է։ Երկրաշարժ է տեղի ունեցել նաև Արգենտինայի Մենդօզա քաղաքում։ Աղէտի ծաւալը դեռ անյայտ է։

Կ. ՊՕԼԻՍ. Բ. Դուռը Անխիալօի դէպքերի մասին թիւրքական դեսպանութիւններին ուղարկած շրջաբերականի մէջ բողոքում է բուլղարների բարբարոսական ակտերի դէմ և յայտնում է, որ ապագայում այդպիսի բռնութիւնների չի համբերի։

ԿՐԱՍՆՕՅԱՐՍԿ. Իրկուտսկի զինուորական դատարանի դատախազի կարգադրութեամբ հրամանագրուած է գրաւականով ազատել զինուած ապստամբութեան մէջ մեղադրւող 200 անձերին։ Դրանցից 121-ը ազատ են արձակուած։

ՄԻՆՍԿ. Դատարանի են յանձնւում երկաթուղային բատալիոնի 4 զինուորներ պատճառով, որ զինուորները և կողմնակի անձեր ժողով էին սարքել, նրանք հրաւիրում էին զօրանոցում գտնւող զինուորներին վերցնել հրացանները և գնալ պահանջներ ներկայացնելու։

ԿԻԵՎ. Հոկտեմբերեան դէպքերից յետոյ Կիևից գաղթել են 400 ից աւելի հրէայ ընտանիքներ։

ՕԴԵՍՍԱ. Բժշկի որդի ուսանող Անատոլի Տօմաշևսկին, խռովելով եղբօր հետ, թունաւորուեց և վախճանուեց։ Ուսանողի եղբայրը հենց այնտեղ և եթ ինքն իրեն գնդակահարեց։

Կ. ՊՕԼԻՍ. Սուլթանը, որ ներկայ սելամլիքին մի քիչ գունատ էր, բայց ընդհանրապէս չէ փոխուել։ Նա բարձրացաւ մզկիթի աստիճաններով սովորական թեթևութեամբ և, հեռանալով, ինքն էր ձիերը քշում։

ՌԵՎԵԼ. Զինուորական-ծովային դատարանը բացի առաջուց դատապարտուածներից, դատապարտեց «Память Азова» յածանաւի 12 նաւաստիների տաժանակիր աշխատանքի վեցից մինչև քսան տարւայ, 12 նաւաստիների՝ բանտարկութեան զանազան ժամանակներով և 15 հոգու՝ տուգանքի, իսկ 34 նաւաստի արդարացրուած են։ Երեք մասնաւոր անձեր յանձնուած են քաղաքացիական դատախազի ձեռքը։

ՕԴԵՍՍԱ. Գործադուլ արին մեխանիկները և մաշինիստները, որի պատճառով և Նիկօլայեվ և Խերսոն շոգենաւեր չը գնացին։

ՎԻԵՆՆԱ. Մամուլի կարծիքով, Արևելեան Ռումելիայի դէպքերի և յոյնական պօգրոմների առիթով Բ. Դրան խիստ գրութիւնը լուրջ բարդութիւններ է ստեղծում Թիւրքիայի և Բուլղարիայի մէջ։

ԿԱԶԱՆ. Ալաֆուզովի գործարանը 500 բանւորի արձակած յայտարարեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնն արգելեց գիմնազիաներում քննութեան ենթարկել այն կողմնակի անձերին, որոնք կամենում են քննել գիմնազիական դասընթացքի բոլոր առարկաներից, բացառութեամբ հին լեզուների։—Մինիստրութիւնը իրաւունք է տալիս ուսումնական շրջանների հոգաբարձուներին թոյլ տալ կողմնակի մարդկանց ռէալական դպրոցների աւարտման քննութիւն բռնել։

Դադարեցրած «XX Вѣкъ»-ի տեղ վաղը լոյս կը տեսնի «Око»։

ՎԱԼՊԱՐԱՅՍՕ. Երկրաշարժը տեղի ունեցաւ օգոստոսի 4-ին, երեկոյեան ժամը 8-ին բոլորովին անսպասելի կերպով։ Իսկոյն սկսւեցին հրդեհներ և բազմաթիւ բնակիչներ կրակի զոհ եղան։ Ահ ու սարսափը աննկարագրելի է։ Բոցը դեռ կատաղաբար բարձրանում է։ Երկիւղ կայ Սանտ-Եագօի համար։ Նաւերը նաւահանգստում չեն վնասուել։

ՄՕՍԿՎԱ. Օգոստոսի 23-ին նահանգական գեմստւօյական վարչութեան մէջ նշանակուած է սովեալներին օգնող համագեմստւօյական կազմակերպութեան ներկայացուցիչների համագումարը։ Համագումարին մասնակցելու համար կը գան սովով բռնուած բոլոր նահանգների գեմստւօյական վարչութիւնների ներկայացուցիչները և լիազօրները։—Քաղաքագլուխը առաջադրութիւն է արել Պետերբուրգ՝ Մոսկուայի նահանգի գործարանային աւագ տեսչին հեռացնելու համար, որովհետև գործարանային տեսչութիւնը ամբողջ տասնեակ տարիներից ի վեր չէ այցելում մի քանի գործարաններ, բոլորովին չէ մտնում բանւորների կարիքների մէջ, ուստի և խօզէինները ծայրայեղ չափերով շահագործում են բանւորներին։

ԿՐՕՆՇՏԱԴՏ. Ժամանակաւոր զինուորական դատարանը վերջացրեց 144 նաւաստիների և 3 ոչ զինուորականների դատի քննութիւնը։ Դրանք մեղադրւում են զինուած ապստամբութեան և «Կօնստանտին» ամրութիւնը գրաւելու մէջ։ Խորհրդակցութիւն է։ Ռեզօլիւցիա դեռ չէ հանուած։

ՎԱՐՇԱՒԱ. Գեներալ-նահանգապետ Սկալօնի վրայ վեց ռումբ ձգեց Կատօլիչեսկայա փողոցում № 12 տան պատշգամբից, մի բնակարանից, որ վարձել էին քիչ ժամանակ առաջ երեք կին։ Երկու ռումբը պայթեցին մայթի մօտ։ Թեթև վիրաւորուեցին երեք կօզակ, մի թաղական վերակացու և մի աղջիկ։ Չը պայթած երկու ռումբերը կօնֆեկտների տեսք ունեին, փաթաթուած թղթի մէջ, իսկ մի ս երկուսը՝ աղիւսի ձև ունեին։ Չարագործներն անհետացան. № 12 տան բնակարանը դատարկ էր, պատուհանները վարագոյրներով ծածկուած։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ. Չեմակի գիւղում միտինգը ցրւելու ժամանակ գիւղացիք ստրաժնիկներին ընդդիմադրութիւն ցոյց տւին. վիրաւորուած են 8 գիւղացի։ Ուրեադնիկը սպանւեց ամբոխի ձեռքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գեներալ-ադիւտանտ Սկալօնի՝ մինիստրների խորհրդի նախագահին ուղարկած հեռագրի պատճէնը. «Այսօր ժամը 4 ին իմ կեանքի դէմ սպանութեան փորձ կատարւեց երեք ռումբով, որ նետեցին մի տան լուսամուտից։ Ես մի քիչ խլացայ, բայց անվնաս մնացի։ Վիրաւորուած են երեք կօզակ, որ ուղեկցում էին ինձ։ Ուրիշ մանրամասնութիւններ առ այժմ անյայտ են։

ՆԻԿՕԼԱԵՎ. Ութ զինուած կողոպտիչներ յարձակուեցին Սև-ծովեան գործարանի աւտելչիկի վրայ, սպանեցին նրան և ուղեկցող ոստիկանին, խլեցին 28,000 ռուբլի և անհետացան։ Սպանութիւնը կատարուած է օրը ցերեկով փողոցում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Զինուորական դիկտատուրա հիմնելու կարելիութեան մասին լրագրների հաղորդած անվերջ լուրերի պատճառով գործակալութիւնը լիազօրուած է կտրականապէս յայտնելու, որ այդ տեսակի տեղեկութիւնները ոչ մի փաստացի հիմք չունեն։

Կ. ՊՕԼԻՍ. Մեծ վեզիրը լուրջ առաջարկութիւններ արեց բուլղարական գործակալ Նաչևիչին, Անխիալօի դէպքերի առթիւ։ Նաչևիչը խորին ցաւակցութիւն յայտնեց և կողմնակի կերպով մատնանիշ արեց, որ պատասխանատւութիւնն ընկնում է Բ. Դրան վրայ, որ արգելք չէր լինում յունական խմբերի բռնութիւններին Մակեդօնիայում, որով յոյների և բուլղարների փոխադարձ ատելութիւնը հասաւ անհնարաւոր աստիճանների։—Կ. Պօլիս եկան երեք հարիւր յոյն փախստականներ Վառնայից, Բուրգասից և Անխիալօից։ Տիեզերական պատրիարքը մի կոչով հրաւիրում է ազգաբնակութեանը հանգստանալ։

ՍԱՄԱՐԱ. Խվալինսկի գնդի հասարակ զինուորները իշխանութիւններին յանձնեցին զօրանոցներն եկած ագիտատօրներին, որոնց մօտ գտնուեց 100 թռուցիկ։

6 օգոստոսի

Կ. ՊՕԼԻՍ. Ուսկիւբի վիլայէթի Կոչանակի շրջանում օգոստոսի 3-ին վեց ժամեայ կռիւ տեղի ունեցաւ թիւրքական և բուլղարական սահմանապահ զօրքերի մէջ։ Բուլղարներից սպանուած են երեք հոգի, վիրաւոր բուլղարների թիւը անյայտ է։ Դէպքի տեղը մեկնեց մի յանձնաժողով՝ քննութիւն կատարելու համար։

ՎԱՐՇԱՒԱ. Գեներալ Սկալօնը թագաւոր կայսրից հետևեալ հեռագիրն ստացաւ. «Շնորհակալութիւն եմ յայտնում Տէր Աստծուն, որ պահպանեց ձեր կեանքը յօգուտ իմ և Ռուսաստանի։ Հոգով մի ընկնէք և հաստատ եղէք անմիտ կրամօլայի դէմ մղւած կռւում։ Նիկօլայ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մինիստրների խորհուրդը իր ամբողջ կազմով առաջին նիստը նւիրեց քաղաքական ծրագրի գլխաւոր սկզբունքների որոշման և ձեռնարկեց Դումային ներկայացնելիք օրինագծերի քննութեան։ Հետևեալ նիստում Խորհուրդը քննելու է Դումայի գումարումից առաջ ձեռք առնելիք միջոցները։

ԿՐՕՆՇՏԱԴՏ. Զինուորական դատարանն օգոստոսի 8-ին սկսում է ապստամբութեան մէջ մեղադրւողների 2-րդ խմբի գործի քննութիւնը, որոնց թւում է գտնւում Դումայի անդամ Օնիպկօն։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ Մայնի վրայ։ Այստեղ ժամանեցին կոմս և կոմսուհի Վիտտէն. նրանք գնում են Վիլհելմսհէ, որտեղ նրան հրաւիրել է Վիլհելմ կայսրը։

ԲԱԹՈՒՄ. Կայարանում սպանւեց երկաթուղային դէպօի կառավարիչը։

ՍՕՖԻԱ. Ներքին գործերի մինիստրութեան կատարած քննութիւնից վերջնականապէս պարզուած է, որ Անխիալօի աղէտը առաջացրել են յոյները, առանց առիթի կրակ բաց անելով հակայոյնական միտինգի հաւաքուած բուլղարների վրայ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ. Երէկ հիւանդանոցից փախած անիշխանական Գոլդմանը երևան հանեց Ամուր գիւղում։ Ոստիկանութեան մօտենալը տեսնելով, նա անյաջող կերպով փորձեց պայթեցնել մի ռումբ, ապա ինքն իրեն գնդակահարեց։ Գտնւեց ռումբերի պահեստ։ Խուզարկութեան ժամանակ ծանր վիրաւորուեց մի ստրաժնիկ։

ԿՐՕՆՇՏԱԴՏ. Ժամանակաւոր զինուորական դատարանի վճիռը՝ զինուորական ապստամբութեան մէջ մասնակցողների առաջին խմբի գործի մասին՝ վաւերացրել է բերդի կոմենդանտ գեներալ Բելյաևը։ Վաղը կը գործադրւի։

ԻԺԵՎՍԿ. Տեղի ունեցաւ հանքերի բանւորների բազմահազար միտինգը։ Վրայ հասած երկու էսկադրօն դրագունների սկսեցին ամբոխին ցրւել։ Դարանից գնդակներ արձակւեցին։ Զօրքերն այն ժամանակ հինգ անգամ միանւագ կրակ բաց արին՝ կան շատ վիրաւորներ և սպանուածներ. վիրաւորուած են մի քանի ձիեր։ Ձերբակալուած են 18 անձեր։ Խիստ գրգռումը շարունակւում է։ Ոստիկանութիւնը կատարում է բազմաթիւ ձերբակալութիւններ։ Ձերբակալուած են 30 յեղափոխականներ։

ԹԵՀՐԱՆ. Տեղի ունեցաւ պարլամենտի շէնքի հանդիսաւոր բացումը, ներկայութեամբ աքսորից վերադարձած հոգևորականութեան, որը երեք օր հիւրասիրուելու է Շահի մօտ, ստանալով թէյ և հիւրընկալութիւն։ Ընտրութիւնների ժամանակի մասին ոչինչ յայտնի չէ,

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ. Մեշչանսկայա փողոցում երևան հանուած մի գաղտնի բնակարանում գտնեցին բրաունինգներ, փամփուշտներ և ահագին քանակութեամբ անլեգալ գրականութիւն։ Ձերբակալուած են երեք հոգի։

ԿԻԵՎ. Տպարանատէրերի ժողովը մշակեց աշխատանքի ընդհանուր պայմանները։ Բանւորական օրը 9 ժամ է. ամսական մինչև 30 ռուբլի վարձատրութիւն ստացողներին աւելացնում է 10%. մինչև 50 ր. ստացողներին՝ 5%. հիւանդութեան դէպքում տրւում է ռոճիկի կէսը. բժշկելը տպարանի հաշւին է։ Ռուսերէն շարուածքին վճարում են 18-ից մինչև 27 կոպէկ 1000 տառի համար, օտար լեզուով շարուածքին՝ 23-ից մինչև 29 կոպէկ։

ՍՕՖԻԱ. Ֆիլիպպէում կայացած համազգային բուլղարական միտինգում ընդունուած են ռեզօլիւցիաներ. վճռուած է հրատարակել այդ ռեզօլիւցիաները, ինչպէս մանիֆեստ՝ ուղղուած բուլղար ժողովրդին։ Ֆիլիպպէի կօմենդանտին, որ մեղադրւում է այն բանում, թէ հրաման չէ տուել անհրաժեշտութեան դէպքում կրակել անկարգութիւններին մասնակցողների վրայ, փոխարինել է գեներալ Անդրէևը։

Խմբագիր-հրատարակիչ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7 պօդիեզդ Նոտար Մղեբրովի։

Նոյնպէս պատւաստում է ծաղիկը։

(չ. ո. կ.) 33—96

Ներսիսեան դպրոցում

սովորող փոքրիկներին խնամելու համար, Գ. Շեմարանի ընթացաւարտ մի ուսուցիչ ցանկութիւն ունի տեղափոխուել Թիֆլիս։ Պայմանների մասին խնդրում է դիմել մինչև օգոստոսի 22-ը Շեմախի, պարոն Յարութիւն Առաքելեան Մաթէոսեանին։

472 1—1

ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Քննութիւններն օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 3-ը։ Առաջին երկու տարում ուսումը մայրենի լեզւով։ Угол Инженерной и Водовозной, № 10/7, ժամի 9-ից մինչև 1։

471 6—1

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

որոնում է ՇՎԵՅՑԱՐԻ, ՍՏՕՐՈԺԻ կամ համանման մի զբաղմունք. ծանօթ է քաղաքին, կարդում ու խօսում է ռուսերէն և հայերէն։ Հասցէն՝ Մուխրանսկայա փող. № 5, պարիկմախեր Մ. Սարգիսովին։ 447 3—2

ՄԻ ՓՈՐՁԻԱԾ ՎԱՐԺՈՒՀԻ

որը աւարտել է իր ուսման ընթացքը Յովնանեան դպր. պարգևով և գիմնազիայի 9 դաս., ցանկանում է ստանալ ուսուցչուհու պաշտօն Թիֆլիսի հայոց դպրոցներում։ Պայմանների մասին դիմել «Ալիքի» խմբագրութեան։

470 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

հրաւիրում է այն անձերին, որոնք կամենում են իրենց վրայ վերցնել Ոպերայի եւ նրան ստորադրեալ քաղաքային հիմնարկութիւնների համար փայտ մատակարարել՝ շնորհ բերել քաղաքային վարչութիւն 1906 թւի օգոստոսի 16-ին, ցերեկւայ ժամը 12-ին, որտեղ կը կայանայ աճուրդ։

66 3—3

Յովսէփ Մելիք-Ջհանեան[ի]

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ[Ը]

Ընդունւում են աշակերտներ՝ գիշերօթիկ, որոնք պատրաստւում են բոլո[ր] նախարդ դպրոցների համար։ Աւանդւում են հետևեալ լեզուները՝ ռուսերէն, հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն և լատիներէն։ Тифлисъ, Гановская ул. № 7.

468

Լոյս տեսաւ և վաճառւում է

Ա. ՋԱՆԵԱՆԻ

Բանաստեղծութիւնն[եր]

I պրակ. գինը 8 կոպ.

Դիմել հայ գրավաճառանոցներ[ին]

417

ՆՈՒԽՒԱՅ ՀԱՅՈՑ ԵԿԵՂ.-ծխ. ԴՊՐՈՑՆԵՐԻ համար

կարօտ է աւագ-ուսուցիչ։ Ցանկալի է, որ աւագ ուսուցիչը ունենար ամուսին-ուսուց[չուհի]։ Ցանկացողները թող դիմեն պ. Մելիք-Ջհանեանին Гановская ул. № 7 учили[ще] пансіонъ և պ. Ս. Շխեանցին Ներսիսեան [դպ]րոց։

467

Ռաշտի երկսեռ դպրոցի

համար հարկաւոր են՝

ՄԻ ՓՈՐՁԻԱԾ

ԱԻԱԳ ՈՒՍՈՒՑ[ԻՉ]

մի ուսուցիչ ձայնագրութեան և այլ[…] կաների և մի ուսուցչուհի ռուսաց [լե]զւաբանութեան համար։

Ցանկացողները կարող են դիմել Ա[…] Յովհաննիսեանին Караклисъ, дача Мер[…]

46[…]

Թաւրիզի Լիլաւա-բա[զարի]

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ԹԱՄԱՐԵԱՆ»

երկսեռ ռէալական դպրոցի համար հարկաւոր են 2 ուսուցիչ—մաթեմատիկայի ձրագրին կրթութեամբ և հայոց պատմութեան ու հայոց լեզւի համար՝ ճեմարանաւարտ վարժուհի

Ձեռագործի, կար ու ձևի և ֆրանսերէնի համար։

Պայմանների մասին դիմել «Ալիք»-ի խմբագրատուն նոյն դպրոցի տեսուչ՝ պ. Նիկ[…]գեանին ժամը 12—2։

465

ԿԱՆԱՆՑ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Բ. Մ. ԿՕԳՕՆԻ

Արտասահմանեան նորաձևութ[եան] պատկերազարդ թերթեր, թղթէ [ձ]ևեր (выкройка) և մանեկէններ (պաճուճապատանքներ)

ՖՐԱՍԵՆԵԱԿ.

Одесса, Авчинниковскій переул., № 1, Почтовой, пр. «Гармоніи»

ԱՇՆԱՆ ՍԵԶՕՆԻ ՀԱՄԱ[Ր]

Ստացուած են ահագին քանակութ[եամբ] բլուզներ, իւբկաներ և այլն ամենա[…]սակ պլաթեներ։ Ընդունւում է բաժանորդագրութիւն արտասահմանեան և ռուսական բոլոր մոդային թերթերի, խմ[բա]գրական գներով։

Թղթէ ձևեր կանանց, տղամարդկանց, երեխայոց, պատրաստի և պատւէր[ով]. Մանեկէններ ռուսական և արտասահմանեան ամենալաւ գործարանների։ Հա[…] վաճառւում տղամարդկանց, կանանց, երեխայոց զգեստների ժուռնալների։ 8[…] ցակը, ցանկը օտարաքաղաքացիներին ուղարկւում է ձրի։

464 6—

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնւող

ՀԱՇՒԵՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից [ըն]դունուած է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններ[ում]

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշւապահութիւն 4 ամսում։

Ներկայ տարւայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից ա[ւա]նդւելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսւելու են սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկւում է ձրի։

Դասընթացը աւարտողներին տրւում են, ֆինանսների նախարարութեան թոյլատր[ուած] ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացւած է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձ[ին] լրացուցիչ եւ կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզւի եւ թւաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հի[մ]նադրին Թիֆլիսում Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր։

Վերևում յիշած ձեռնարկը ծախւում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներ[ում]։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօ[ստ]ի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ 378 8—20

Электропечатня М. Вартанянца, Гановская № 3.